№ 205 ՈՒՐԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՈՒՐԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22 № 205

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, édaction «Mschak».

Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Զուտով լոյս կը տեսնի Թիֆլիսում

„ԵՐԿԻՐ“

Գրական-հասարակական օրաթերթ:

Բաժանորդագին է մինչև տարվայ վերջը Թիֆլիսում 1 ր. 80 կ., դուրսը 2 ռուբլի, ամսով Թիֆլիսում 60 կոպ., դուրսը 70 կոպ., արտասահման ամիսը 1 ռուբլի:

Խմբագիր-հրատարակիչ Բժ. Մ. Մուրադեանց

առ. 2—2

ԱՐԾԱՆ ՎԱՃԱՌՈՒՄ

Դեպքով գնել ենք զանազան գործարաններից արտասահմանեան և ռուսաց արհեստանոցների մահուդէ ապրանքներ՝ տրիկո, շորեղէն և վերարկուացու կտորներ: Վաճառքը նշանակվում է սեպտեմբերի 18-ից: Գները անխօս: Խնդրվում է Թիֆլիսի հասարակութեան՝ չը զլանալ այցելելու—Суконный магазинъ, подъ Артистическимъ Обществомъ Головинскій пр. 4—10

Մ ի ք ա յ է լ ե ա ն պ ր օ ս պ. № 24/4 տանը գտնվող

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԵՒ ԱՆԳԼԻԵՐԷՆ

ԼԵԶՈՒՆԵՐ ԵՆ սովորեցնում 8 ամսում տեսական և գործնական զբաղմունքների միջոցով. ամսական 5 ռուբլի: Ընդունելութիւն ամեն օր 4—7 ժամը:

Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

(առ.) 9—10

Մանթաշեանի վաճառականական ուսումնարանի

ՏԵՍՈՒՉԸ

յայտնում է ի գիտութիւն պ.պ. ծնողների, որ հոգաբարձական ժողովը որոշեց բանալ ներկայ 1906 թ. սեպտեմբերի 25-ից մէկ պատրաստական բաժնմունք: Աշակերտների ընդունելութիւնը շարունակվում է: Ուսման տարեկան վճարն է 40 ռուբլի: առ. 2—5

Թիֆլիսի Հայոց Դրամատիկական Ընկերութիւնը

յայտնում է ի գիտութիւն երգեցիկ խմբերում ժամանակող սիրողների, երիտասարդների և օրիորդների, որ «Արտասազդ» նոր պիեսայի համար կազմվում է 40—50 հոգուց բաղկացած մի երգեցիկ խումբ: Մասնակցել ցանկացողները կարող են գիմել վարչութեան անդամ Պօղոս Կարա-Մուրզային ամեն օր, ժամը 4-ից մինչև 6-ը, հետևեալ հասցէով՝ Габаевскій пер. 12.

(առ.) 3—4

Բժ. Զարգարեանցը

մեկնեց արտասահման:

(առ.) 3—3

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ, ՊԱՏՄՈՒԹԵԱՆ և ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ

Ընտանիքներում

Ա. Մ. ԵՂԵԿԵԱՆ

Հասցէն բանակցութեան համար՝ Ул. Петра Великаго (бывш. Лабораторная) № 21:

առ. 12—20

ԵՐԱԺՇՏԱՊԵՏ

Յովսէփ Տէր-Դաւթեան

Ելիզաւետպոլսայա 40.

(ա. օ.) (առ.) 5—5

Ա Ր Ա Ր Ա Տ Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

ԿՕՆԵԱԿԸ

առ. (ա. 22, հ 7, 22, ն. 10) 1—4

Կիրակի, սեպտեմբերի 24-ին, առաւօտեան ժամը 11-ին

Հասարակական գրադարանի դահլիճում (պալատի հանդէպ)

Ն շ ա ն ա կ վ ա ծ է

Հայոց Ազգագրական Ընկերութեան

Ա.ՐՏԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Զբաղմունքի առարկաներն են՝

ա) 1906 թ. հախահաչի քննութիւնը.

բ) Ընկերութեան ճիւղեր բաց անելու խնդիրը.

գ) Ե. Լալայեանի զեկուցումը Նոր-Բայազէտի գաւառում կատարած պեղումների մասին: (Ցոյց կը տրվին գտնված հնագիտական իրերը).

Նախագահ՝ Ա. Մելիք-Ազարեան

առ. ու. շ. կ. 1—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գանձակի անվանկալը. Վերջին տեղեկութիւններ. Տեղեկաւոր Զանգեզուրի. Կառավարչական շրջաններում. Մի զոյգ Մուրմցովի հետ. Լ. Տոլստոյի կարծիքը. Իմ օրագիրը. Ոչ այդպէս չէ. Տխուր փատեր. Մի նոր սխրագործութիւն. Մի նկատողութիւն. Բողոք. Զուլումի յուշերից. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԳԱՆՁԱԿԻ ԱՆԱԿՆԿԱԼԸ

I

Անակնկալ նորութիւն եղաւ գանձակեցիների համար այն բանը, որ քաղաքային դումայի ներկայ կազմը հրատարակված է ապօրինի և վաւերական են ճանաչված առաջին ընտրութիւնները:

Մեր ընթերցողները իր ժամանակին կարդացել են մանրամասն տեղեկութիւններ Գանձակի ընտրութիւնների մասին: Ուստի մենք յիշեցնենք նրա էութիւնը:

Անցեալ տարի մայիսի միջին թւերում Գանձակում տեղի ունեցան ձայնաւորների ընտրութիւնները քաղաքային դումայի համար:

Ընտրվեցին 60 հոգի, որոնցից 34-ը քրիստոնեայ և 26-ը մահմեդական: Այդ ընտրութեան դէմ եղան բողոքներ, որոնք թէև անհիմն էին, բայց յարգվեցին նահանգական ատեանի կողմից: Նշանակվեց նոր ընտրութիւն, որ տեղի ունեցաւ երկու ամսից յետոյ, մայիս ամսի միջին թւերում:

Երկրորդ ընտրութեան ժամանակ անցան 55 ձայնաւոր, որոնցից 50 մահմեդական և 5 քրիստոնեայ: Այդ ընտրութիւնը հաստատվեց վարչութեան կողմից: Եւ որովհետև քրիստոնեայ ձայնաւորները հրաժարվեցի են իրանց կոչումից, Գանձակի դուման դարձաւ բացառապէս մահմեդական:

II

Առաջին ընտրութեան վերաբերութեամբ վարչութեան չափազանց բծախնդիր լինելը, իսկ երկրորդի շատ շուտ հաստատելը շատ ծանր ազդեց հասարակական կարծիքի վրա:

Եւ թէև գանձակեցիների այն մասը, որը գտնում էր առաջին ընտրութիւնները օրինաւոր, դիմեց կառավարչական սենատին գանգատով, բայց նա ստիպված էր հաշտվել իրականութեան հետ: Նոր դուման արդէն կազմվել էր, հաստատվել և սկսել էր գործել: Դումայի ընտրեց քաղաքագլուխ և կազմակերպեց քաղաքային տնտեսութիւն իր հսկացողութեան ներքոյ:

Սակայն կառավարչական սենատը, ուսումնասիրելով գործը անաչառ կերպով, բոլորովին ուրիշ կերպ նայեց նրա վրա, քան նայել էր տեղական վարչութիւնը: Նա գտաւ առաջին ընտրութիւնը օրինաւոր և վերականգնեց խախտված արդարութիւնը:

Եւ ահա այժմ Գանձակը պէտք է հրաւիրէ ձայնաւորների առաջին կազմը, ընտրէ քաղաքագլուխ և կազմակերպէ քաղաքային տնտեսութիւնը:

III

Քաղաքային նոր խորհրդի վրա ծանրանում են մի շարք պատասխանատու պարտաւորութիւններ:

Գանձակ քաղաքը այժմ և մի տարի սրանից առաջ միևնոյն դրութեան մէջ չէ: Մի տարվայ ընթացքում քաղաքում տեղի ունեցան այնքան փոփոխութիւններ հայերի և թուրքերի տրամադրութեան մէջ, կատարվեցին այնպիսի դրամներ, որ ազգաբնակութեան համար մեծ ջանք և աշխատանք է հարկաւոր հարթելու բազմաթիւ խոչընդոտներ, որոնք հանդէս են եկել երկու ազգային տարրերի մէջ:

Նոր քաղաքային դուման, որի մէջ և հայ և թուրք պէտք է միասին գործեն, պարտաւոր է ամեն հնար գործադրել խաղաղացնելու ազգաբնակութեան մտքերը և միջոցներ մշակելու, որպէս զի անցեալի տխուր երևոյթները չը կրկնվեն ապագայում, և կարողութիւն տալ բուժելու այն խոր վէրքերը, որ առաջ են եկել ազգայիներից:

Նոր քաղաքային դումայի գործողները պէտք է նպատակ դնեն համարաշխ գործունէութեան հաստատուն հիմքեր ստեղծելու քաղաքի մէջ և օրինակ լինելու գաւառային շրջանների համար:

IV

Գանձակի քաղաքային դումայի առաջին հարցերից մէկը պէտք է լինի քաղաքագլխի ընտրութիւնը:

Կը ցանկանամ արդեօք վերընտրել ներկայ քաղաքագլխին, թէ կընտրեն նոր մարդի, այդ մենք չը գիտենք. բայց անշուշտ ցանկալի է, որ քաղաքագլուխը այնպիսի մի անձ լինի, որ վստահութիւն վայելում լինի թէ հայերի և թէ թուրքերի կողմից: Քաղաքագլխի վստահելի անձ լինելը, նրա անպայման շիտակութիւնը մանաւանդ կարևոր են այժմ, երբ քաղաքի ազգաբնակութեան մէջ չափազանց տարբեր հոսանքներ և փոխադարձ կասկածներ կան, և ուստի պահանջվում է, որ քաղաքի ներկայացուցիչը լինի անաչառ անձնաւորութիւն:

Եթէ նոր դումայի գործողները կարողանան համերաշխութիւն պահպանել և արդիւնաւոր գործունէութիւն սկսել, նրանք մի էական գործ կատարած կը լինեն ոչ միայն մերձաւոր շրջափակի, այլ և հեռաւոր նպատակների համար:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Օրդուբադից սեպտեմբերի 20-ին մեզ հեռագրում են.—Այսօր Ագուլիսի հայերը և Օրդուբադի թուրքերը, հաւաքվելով Օրդուբադի գաւառապետ Ֆիլիպովի նախագահութեամբ, անկեղծ հաշտվեցին. խօսք տուեցին մոռանալ անցեալը և վերացնել բոլոր տարաձայնութիւնները, որոնք կարող են ազդել երկու ազգերի բարեկամական և բարեացական յարաբերութիւնների վրա և միմեանց յանխնսը գիւղերում: Պարզվեց, որ բոլոր օրդուբադցիների կողմից չէ եղել:

Բիազեվ Մեհտիխան
Աւետիս Ներսիսեան
Հախնազարեանց

—

Զանգեզուրի գաւառի Քարահունջ գիւղի ներկայացուցիչներ՝ Գէորգբէգեանը, Գրիգորեանը և Բաղիրեանցը հեռագրում են Կովկասի Փոխարքային գիւանատանը. «Էկզեկուցիան, բաւի բուն նշանակութեամբ, շարունակվում է. անմեղ քաղաքացիները հնարաւորութիւն չունեն կատարել իշխանութեան պահանջները, որովհետև մեղաւոր չեն իրանց վերագրած գործողութիւնների մէջ: Դրութիւնը կրիտիկական է. ազգաբնակութիւնը արտասված աղաչում է՝ յանուն ճշմարտութեան քննել յանցանքը և գործել ապագայում համաձայն ձեր բարեհայեցողութեան»:

—

Շամշադին, 15 սեպտեմբերի

Սրանից մի 10 օր առաջ, երբ մօտ 20 հոգի շամշադնեցիներ եկած են լինում Թօվուզ կայարանը, Մամեդ-աղա Իսկենդարբէգովը նրանց կանչում է իր մօտ, հայհոյում է և սպառնում է նրանց պատժել, եթէ Դրվի գիւղի այգիներից իրանց թուրքերի վրա կրակողներին չեն տալ: Մի քանի օրից յետոյ էլ մի նամակ է գրում զրեցեցիներին հետեւել բռնակալութեամբ. «Մի քանի օր առաջ ձեր հայերը հրացան են արձակել օքսուզուեցի մի թուրքի վրա. եթէ անյապաղ կառավարութիւնը չէք յանձնի այն «շան տղին», այդ վարմունքը մեր ժողովրդի մէջ կարող է յուզում առաջ բերել և կարող է մի արիւնռա դրամա ստեղծվել. հարկաւոր է այդպիսի «շան տղաներին» յանձնել զինուորական իշխանութեանը: Դուք, «չուղուլ» զրեցցիներ, հանգստացէք, ապա թէ ոչ ձեզ համար վատ կը լինի»: Ստորագրված է «Խաղաղարար կոմիտէի անդամ Մամեդ-աղա Իսկենդարբէգով»: Նամակը գրված է ռուսերէն:

Այդ նամակին զրեցիները պատասխանել են այսպէս—էլի ռուսերէն. «Ցարգարժանազոյնդ Մամեդ-աղա. բաւական է ջուրը պղտորէք, բաւական են թափած արիւն ու արցունքը: Թուրքերը անհետ կորցրին Թաթլուի քահանային և նրա ընկեր պահեստի զինուորին թուրքերը սպանեցին զրեցի հային Զորաթանի գոմերում: Թուրքերը կողոպտեցին Ղալալուից Թօվուզ կայարանը գնացող-եկող հայերին. թուրքերը հազար ու մի անախորժութիւններ արին ճանապարհորդ հայերին. չը նայած այս բոլորին, մեր հայերը դարձեալ այդ բանի վրա կայում են սառնասրտութեամբ, ինչպէս եղանկի դէպքերի: Նոյն իսկ ընդունենք թէ հայերը կրակել են թուրքի վրա,—չը նայած այդպիսի բան չը կայ,—ձեր կարծիքով, պ. Իսկենդարբէգով, այդպիսի եղանկի դէպքերի համար պիտի արիւնռա դրամա առաջանայ. հա: Ցաւալի է. եթէ խաղաղարար կոմիտէի անդամը այդպէս է դատում, էլ ինչ կարելի է սպասել թուրք հասարակ, խաւար մասսայից: Բայց և այնպէս մենք, զրեցեցիներս, հաւատացած ենք, որ ձեր հասարակ ժողովուրդը այդ քանի մէջ այնպէս չէ դատում, ինչպէս դուք»: Ստորագրված է. «Խաղաղութեան և հանգստութեան կողմնակից զրեցիներ»:

Հայկ

—

Գանձակ, 19 սեպտեմբերի

Երէկ, ամսիս 18-ին, Բանանց գիւղացի Արտէմ Աթանասեանը իր եղբօր հետ ճանապարհվում է դէպի Վերի-Մարհատ գիւղը հողը ցանելու համար: Երբ նրանք հասնում են Օրհնելի-Սեռը, անտառում դարան մտած մի խումբ թուրքեր հարձակվում են նրանց վրա: Թուրքերը տարել են Աթանասեանի զէնքերը, արծաթէ գօտին, 47 ռուբլի փող, Ղորին և 3 եզներ: Բանանցեցիք լուրն առնելուն պէս հասնում են դէպքի վայրը: Հետամուտ լինելով թուրքերին, անասունների հետքը տանում են մինչև հարևան Մօլլա-Հասանլու գիւղը, ուր Ղորին գտնում են, իսկ եզները՝ ոչ: Գրգռված բանանցեցիք ուզում են գիւղը տակն ու վրա անել, բայց տանուտէր Եպիսկոպոսեանը արգելում է այդ քայլը: Գիւղացիք այս մասին յայտնեցին պրիստաւին և գեն. նահանգապետին: Կարևոր ենք համարում յիշատակել, որ վերջին տասն օրուանը սպանվել է մի հայ: Փիրուզ մէկը սպանված, երկուսը վիրաւոր: Բանանցում երէկվան սպանութիւնն է:

Ի՞նչ են մտածում Գանձակում նրատած ու սուտամեռուկ ձեացած թուրք գեկավարները. այս բոլորին մի օր վերջ է լինելու թէ ոչ: Ի՞նչ կը լինէր, երբ գեստաշէնցին իր վրէժն հանէր թօզանլուեցիներից, փիրեցին, բանանցեցին՝ Ամիրվարից և Մօլլա-Հասանից: Էլի կասեն հայերը նախայարձակ եղան:

—

Շուշի, 18 սեպտեմբերի

Սպասվում են 40 հատ ռուս քաղաքային պահապան-ոստիկաններ (городовой). մինչև այժմ եղած հայ և թուրք ոստիկաններին հեռացնում են պաշտօնից:

Լոյս տեսաւ Բաուէրի նոր պարտադիր յայտարարութիւնը՝ անային զբօր պահելու և եկող գնացողին պօլիցիային յայտնելու համար:

Լուր կայ, որ Բաուէր, գնում է Պետերբուրգ աւելի բարձր պաշտօն ստանալու համար:

Երէկ սարի քարերը յարձակվելով Բալոլջա գիւղի տաւարածների վրա՝ խլեցին տարին 150 գլուխ տաւար:

Նոյն օրը Գիւլափլուի մօտով անցնելիս թուրքերը գնդակահար արին մի նախիջևանիկեցի հայի:

Նպատամատոյց յանձնաժողովի և առաջնորդի յարաբերութիւնները ևս լարված են: Առաջնորդը միանգամայն անտես է արել ժողովրդի շատ ու ցաւը և եպիսկոպոսի անդամները երես կանգնեցին և պահանջեցին Աշտա եպիսկոպոսից՝ կամ ժողովրդին ծառայել, կամ թողնել Շուշին, որովհետև 120 հազար ժողովրդի ձայնը, նրա հազը թողած, պարում է թմբուկով: Առաջնորդը խուսացել է ժողով գումարել և ժողովրդի պահանջներն ու ցաւերը լսել: Ի՞նչ լաւ կոմբինացիաներ են. հաւատում ենք... կեցցէ առաջնորդը...

Դաշնակցական լինելով, կամ Դաշնակցութեանը յարգելով՝ առաջնորդ, վարդապետ, կառավարիչ և այլն պէտք է ոտնակոխ անեն ժողովրդի շանը: Միթէ՞ դաշնակցութեան «խաթրու» առաջնորդը պիտի պահանջէ, որ դպրոցում բոլոր ուսուցիչները դաշնակցական լինեն: Միթէ՞ Դաշնակցութեան «չէյֆերի» թելադրութեամբ պիտի վաւեր կամ անվաւեր ճանաչվեն հոգաբարձութեան որոշումները՝ դաշնակցական ուսուցչին պահելու և ոչ-դաշնակցականին, թէկուզ ամենաարդիւնաբեր ուսուցչին, հեռացնելու: Այս ինչքը ենք տեսնում, ով երնեքի և երկրի ասուածներ, էշմածնից մեր գլխին փաթաթած մի ապուշ եպիսկոպոսի շնորհիւ: Նա միացնող, համերաշխութիւն քարոզող պէտք է լինի, թէ պառակտող: Տարէք շուշեցիք: Ամօթ ձեզ...

—

Նոր-Բայազէտ, 16 սեպտեմբերի

Ամսիս 13-ին, առաւօտեան ժամի 4-ին, մի խումբ զինված մարդկանց և 8 կօզակների միջև հրացանաձգութիւն է տեղի ունենում, որի ժամանակ կօզակները վիրաւորում են նրանցից երկուսին ու թողնում 2 ձիեր:

Կօզակները օգիցեր Բօրանիկովի հետ միասին քաղաք գալով՝ պատմեցին հետեւեալ մանրամասնութիւնը: Երանոս գիւղի ճանապարհի վրա գտնվող կայարանում պատահելով կօզակներին, զինված խումբը սկսում է փախչել (երևի կարծելով որ կօզակները դրանց զինաթափ են անելու, մանաւանդ որ պատերազմական դրութիւնը վերացված չէ մեր գաւառից): Կօզակները նկատելով այդ, օգիցերից հրաման են ստանում հետեւել փախստականներին: Մի քանի վերստ հետամտելով նրանց, կօզակները ուզում են վերադառնալ, երբ յանկարծ դիրք մտած փախստականների կողմից սկսվում է սաստիկ հրացանաձգութիւն: Կօզակները պատասխանում են: 11 հոգուց բաղկացած խումբը տեսնելով, որ ընկերներից երկուսը վիրաւորվեցին, վերցնում է դրանց հրացանները ու անհետանում: Կօզակների ձեռքն ընկած ձիերը այսօր յանձնել են ոստիկանութեան:

Ամսիս 13-ին այստեղ եկան Մարգիս թուրք գիւղը գնալու համար մի քանի սատանեակ բեռնաւորված ուղտեր՝ թուրքերի առաջնորդությամբ: Բնակչութիւնը կասկածելով, որ սոխի և ուրիշ ապրանքների պատրուակի տակ թուրքերը զէնք են անցկացնում Բասարգէչարի շրջակայ թուրք գիւղերի համար, ուղտերի մի մասը խուզարկութեան ենթարկվեց, բայց ոչինչ չը գտնվեց: Թէ ինչ գաղտնիք են ծածկում իրանց սէջ այդ բեռները, մեզ համար պարզ չէ: Բնակչութիւնը երկմտում է:

Ռ. Ազարեանց

—

Սև-Քար գիւղից (Ղազախի գաւառ) գրում են մեզ հետեւեալը. «Մեր հարևան Կուտէն գիւղի երիտասարդներից մէկը, Վարթան Յարութիւնեանցը, մտքում դրնում է վախեցնել մեր Սև-Քար գիւղի, Վարշամեանցի 14 տարեկան աղջկան: Լուրը հասնում է աղջկայ մօրը և սա աշխատում է դժբաղդութեան առաջն առնել: Սեպտեմբերի 17-ին, կիրակի երեկոյ, Վարթանը զինված գալիս է Սև-Քար և մօտենում Վարշամեանցի տանը: Մայրը թաղցնում է աղջկան նախ պահարանների տակը, իսկ յետոյ աշողեցնում է փախցնել հարևանների տունը: Վարթանը պնդում է, որ աղջկան պիտի տան իրան: Մինչ այս մինչ այն՝ մօր ձայնի վրա հաւաքվում են հարևաններից մի քանի հոգի և յորդորում են Վարթանին վերադառնալ իրանց գիւղը: Վարթանը սպառնալիքներ է կարդում և գնում: Հետեւեալ օրը Վարշամեանցները՝ մայր և աղջիկ վճռում են ճանապարհ ընկնել դէպի Թիֆլիս, որտեղ գտնվում է ընտանիքի հայրը»:

—

Պարսկաստանի զրութիւնը հետզհետէ ապառնալի է դառնում: Թաւրիզի ժողովուրդը, որ «բաստ» էր մտել անպիտան հիւպատոսարանը և պատառոտել էր Շահի այն ֆիրմանը, որ ներկայացրել էին իրան, ներկայումս վարիքի անկել տուած ջհաները ջարդոտել է: Այդ ջհաները անկում են իրը նշան այն բանի, որ հացն ու միսը էժանացել են և կառավարութիւնը հաշտվել է ուզում ժողովրդի հետ:

Ուրմիայի մօտ օսմանեան զօրքերը առաջացել են և գրաւել քաղաքի մօտ «Դարտի-բէյ» կոչվող՝ Աղա-խան Միր-Փէշնչի ընդարձակ կալուածները: Օսմանցի զօրքերը արշաւել են և Սօմայի վրա, վտնել են այնտեղից Սօմայի զորքերի ներկայացուցիչներին իրանց զօրքերի հետ միասին:

Աւշոխները և Շարաֆ-բէգի մարդիկը՝ հարիւրական հոգուց բաղկացած երեք խումբ կազմած՝ իրանց տերրօրներով ապրափամար են անում Ասլի և Սալմատի ազգաբնակութիւնը:

Նոյն քիւրդերը կրկին են մղել պարսկի զօրքերի դէմ, որոնցից սպանված են Սուլթանդուն հազարապետը, մի փոխգնդապետ ու բաւական թիւով զօրք:

Քիւրդերը արձակ համարձակ եկել են Մուկադելի, որ Ուրմիայի ծովակում անառիկ դիրքով մի թերակղզի է, և քշել են նոյն տեղի տաւարները:

Թիւրքիայի առաջնորդությունը դէպի Պարսկաստան բաւական յանդուգն գործ է նկատվում: Ի՞նչ յոյսով և ումի հետ են գործում: Այդ շուտով կը պարզվի:

Ենթադրվում է, որ Ռուսաստանը՝ զրված իր շահերից կը միջամտէ գործին:

Անգլիան նոյնպէս ուզում է միջամտելու և գրաւելու գուցէ Պարսից Ծոցի ափերը:

—

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ

—

Սեպտեմբերի 12-ին

Երկար սպասեցինք, և վերջապէս ամսիս 10-ին Գօրիս ժամանց գեներալ-նահանգապետ Բաուէր: Դալու մասին նախօրօք չը յայտնելու համար, մեծ բազմութեամբ ընդունելութիւն չը գտաւ գեներալը:

Հանդիսաւոր ընդունեց հայերի մատուցած աղ ու հացը և մի քանի խօսքերով բացատրեց, որ ինքը եկել է խաղաղութիւն հաստատելու նպատակով, որ իր միակ ցանկութիւնն է: Եւ եթէ կուռոյ կողմերը՝ հայ և թուրք, համերաշխութեամբ իրար ձեռք չը պարզեն, չը հաշտվեն, հաւատացնում եմ ձեզ, ասաց գեներալը ունկնդիրներին, որ ես ստիպված կը լինեմ աւելի բռնի, կոպիտ միջոցների դիմել, զօռով էլ լինի, մի կերպ հաշտեցնել երկու կուռոյ ժողովրդին և նորմալ կեանք ստեղծել գաւառում:

Հայերը մեծ համակրութիւն ցոյց տուին գեներալի խօսքերին, և աւելացրին, որ իրանք էլ այդ ցանկալի խաղաղութիւնն են ուզում տեսնել ալեկոծված, աւերված և սովի մատնված գաւառում:

Հետեւեալ օրը, 11-ին, գեներալը յիսուն կօզակի հետ ուղևորվեց Ղափան: Ասում են, որ գեներալը մեծ ուշադրութեամբ էր լսում «Միութեան» գործարանի այրման և ջնջման մասին: Պատի հետեանքը և գեներալի գործունէութիւնը շուտով կը պարզվի:

Մինչդեռ դրեք իրանց արտերը ապառով հնձե-

լու համար խնդրեցին գեներալին մի պահակ յուզում են Ռուսաստանը, այն է՝ ազատագրական շարժման «ապագայի», «անցեալի» և «ներկայի» ահռելի։

Առաջ ենք բերում այդ զրույցից ամենից աւելի բնորոշ մասերը։

Մենք,—ասել է Մուրոմցեվը,—ներկայումս ապրում ենք շարժման կանգնած մոմենտում, սպասողական մոմենտ է. իմացէք, որ հին բժիշկը նեխման քայքայման իր այս շրջանում չէ կարող հանգստութիւն վերականգնել։ Տրեպովը մեռաւ, բայց վախեցնելու սիստեմը շարունակվում է դեռ. կալանաւորում են անհամար քանակութեամբ մարդկանց և այն էլ ամենանչնչին կասկածի հիման վրա։ Սոլիպինը մոտ օրերս ասել է իր բարեկամներից մէկին, որ, իր կարծիքով, այժմ կալանաւորված են բոլոր կասկածելիները, և այս տարվայ վերջը կը լինի յեղափոխութեան վախճանը։ Սոլիպինը խաբում է իրան և միևնոյն ժամանակ խաբում է ուրիշներին տաբերակոյթ խաղաղացումով...

«Մենք չունենք ոչ մի ազատութիւն, ոչ մի երաշխաւորութիւն իշխանութեան կամայականութիւնների դէմ։ Ռուսաստանում այժմ գործող դատարանները լիովին նման են ձեր յեղափոխական տրիբունալներին. միևնոյն անբեկանելի վճիռները, միևնոյն անգութ մահվան պատիժները։ Միակ տարբերութիւնը նրանումն է, որ մեզանում այդ դատարանները գործեց են բէակցիայի։ Սոլիպինը կարծում է, որ իր ծրագրած միջոցները կը հանգստացնեն երկիրը, բայց նրանք անզօր են։ Հարկաւոր է ոչ թէ 4 միլ. դեսեատին, որ վերցրել է նա արքունական հողերից, այլ 24 միլիոն։ Եթէ Դուման աշխատելու լիներ ութ օր էլ, նա կը ստեղծէր բոլորովին տարված, պատրաստի ագրարական օրէնք։ Դումայի զբաղմունքները կենտրոնանում էին գլխաւորապէս յանձնաժողովներում. նրանց աշխատութիւններից օգտվում է այժմ կառավարութիւնը։ Սոլիպինը ուսումնասիրում է նրանց վիճաբանութիւնները։ Նրանք մշակեցին օրինագիծ, որով սահմանվում է գասակարգերի հաւասարութիւնը, օրինագծեր, որոնք ապահովում են անձի անձեռնմխելիութիւնը և կրօնի ազատութիւնը և, վերջապէս, ագրարական։ Ահա հէնց այս վերջինն էլ վախեցրեց կառավարութեանը և զրեց նրան արձակելու Դուման։

«Դումայի արձակումը հակասահմանադրական մի ակտ էր, հետևեալ երկու պատճառով. 1) յայտարարելով արձակումը, կառավարութիւնը պարտաւոր էր ճիշտ որոշել ոչ թէ ապագայ գումարման ժամանակը, որ ոչ մի նշանակութիւն չունի, այլ ընտրութիւնների ժամանակը. 2) հրման պէտք է կարդար ժողովում մինխարը։ Մինչդեռ մեր գոյութիւնը վերջանալու մասին մենք իմացանք միայն լրագրերից և յայտարարութիւններից...

«Նախագուշակում են, թէկ վաղաժամ է, որ ապագայ Դումայում կը լինի միայն երկու կուսակցութիւն. մէկը՝ ծայրայեղ աջակողմեան, իսկ միւսը՝ ծայրայեղ ձախակողմեան։ Ճշմարիտ է միայն այն, որ աջակողմեանը կը լինի աւելի ըէակցիոն, քան թէ արձակված Դումայինն էր։

«Վերջին ընտրութիւնները բոյկոտի էին ենթարկվում սոցիալ-դեմոկրատների կողմից, նոյն իսկ ամենածայրայեղ ընտրողները սոխպված եղան սալ իրանց ձայները աղատամիտ թեկնածուներին։ Ապագայ ընտրութիւնների ժամանակ սոցիալիստները կունենան իրանց թեկնածուները, և կառավարութիւնը, ի հարկէ, չի զլանալ աջակցելու մէկ կամ միւս ծայրայեղ սոցիալիստին, որպէսզի Դումա մտցնէ անկարգութեան տարերքը և այդպիսով հիմք ունենայ նոր Դուման նորից արձակելու։ Կառավարութեան ընտրողական պայքարը ուղղված կը լինի բացառապէս ազատամիտների դէմ։

«Իսկ ազատամիտները պաշտպանվելու են և արդէն պաշտպանվում են։ Մենք սկսել ենք կուլիս լրագիրների, բրօշուրների և կոնֆերենցիաների միջոցով։ Մենք ենչպէս անցեալ տարի, այնպէս և այս տարի պաշտպանելու ենք սահմանադիր-ռամկավարական գաղափարները, որոնք, ինչպէս յայտնի է, ամենևին չեն պահանջում միապետութեան ոչնչացումը։ Մենք ուզում ենք, որ Կայսրի մոտ կանգնած լինեն երկու ընտրեալ պալատներ. մէկը՝ ուղղակի, միւսը՝ երկասփեան։ Ինչ վերաբերում է ագրարական բարեկարգութիւնին, մենք միաժամանակ պաշտպանելու ենք և մասնաւոր սեպհականութեան սկզբունքը և էքսպրոպրիացիայի սիստեմը։

«Մեզ հետ կը լինեն գիւղացիները, որոնք նոր Դումայում, անկասկած, կը ներկայացնեն մի անկախ և շատ բազմանդամ կուսակցութիւն։ «Ստիպեցէք մեզ հող տալու, իսկ մենք,—ասում էին նրանք,—կը ստիպենք ազատութիւն տալու»։

«Այդպէս են նրանք ձևակերպում իրանց համերաշխութիւնը մեզ հետ...

«Դուման գումարելու ժամանակամիջոցը դժուար է որոշել Սոլիպինը ցանկանում է, որ նախ քան ընտրութիւնները հանգստացնի լինի. ապա նա շատ կը ցանկանար, որպէսզի բիւջէն հաստատութիւն ստանար մինչև Դումայի գումարումը։ Կարող է պատահել, որ Դուման կը հաւաքվի առաջիկայ տարուց ոչ վաղ»։

Լ. ՏՕԼՍՏՕՅԻ ԿԱՐԾԻՔԸ

Ֆրանսիացի յայտնի ուսումնական Բուայէ, որ այժմ ճանապարհորդում է Ռուսաստան, նորերս այցելից կոմս Լ. Տօլստոյին Եասնայա Պօլիանա ընկավայրում և երկարաւև բանակցութիւն ունեցաւ նրա հետ։ Այդ խօսակցութեան բովանդակութիւնը նա տպել է «Temps» լրագրում, որից ռուս լրագիրները (տես նաև «Страна» № 157) քաղուածներ են արել։

Բուայէն հարցրեց Տօլստոյին՝ ինչու նա չը պատասխանեց Մակսիմ Կովալևսկու բաց նամակին, տպված «Սատանա» լրագրում, որով Կովալևսկին խնդրում էր Տօլստոյից յայտնել իր կարծիքը այն ճգնաժամի մասին, որ կրում է այժմ Ռուսաստանը։ Տօլստոյը, իբրև պատասխան յայտնեց, որ այս օրերս լոյս կը տեսնի իր բրօշուրան «Ռուսական յեղափոխութեան միտքը» վերնագրով, որի մէջ ճշտութիւնամբ բացատրված կը լինեն իր հայեացքները այդ խնդրի մասին։ «Ինձ ծեր-շատախօս են համարում—ասաց Տօլստոյը։ Բայց ինչ արած, հօ չեմ կարող ասել, որ ես իրաւունք չունեմ, երբ ես հաւատում եմ, որ իրաւունքն իմ կողմն է։

«Ամբողջ հարցը ինձ շատ պարզ է թուում։ Որտեղ է պատճառը այն բոլոր չարիքի, որից տանջվում է Ռուսաստանը և որը, շատերի կարծիքով, կարող է նրան ի կորուստ տանել։ Ամբողջ չարիքը, իմ համոզմամբ, ծագում է նրանից, որ Ռուսաստանում չը կայ այնպիսի իշխանութիւն և հեղինակութիւն։

«Բայց պէտք է պայմանաւորվել։ Ի՞նչ է հասկացվում իշխանութիւն խօսքով։ Իշխանութիւնը երկու տեսակ կարող է լինել։

«Արտաքին ոյժի իշխանութիւն, խղճից չը հաւանված և, ուրեմն, անբարոյական և չար,—դա է հէնց կառավարական այն իշխանութիւնը, որ յենվում է զինուորների, ժանդարմների և պահակների վրա։

«Ներքին իշխանութիւն, հիմնված քաղաքացիների ազատ համաձայնութեան վրա և, ուրեմն, բարոյական և բարի,—դա է հէնց այն իշխանութիւնը, որ պայմանաւորված է առօրէնքն ունեցած ընդհանուրի հնազանդութեամբ։

«Դժբաղդաբար, միաժամանակ Ռուսաստանում մենք չունենք ոչ առաջին և ոչ էլ երկրորդ իշխանութիւնը։

«Ես պատկանում եմ այն անձանց, թէին, որոնք կարծում են, որ առանց իշխանութեան անկարող է գոյութիւն ունենալ և ոչ մի հասարակութիւն։

Ներքին իշխանութիւնը, որի մասին ես ձեզ ասացի, կարելի է սոսկ բարոյական կապակցութեան դէպքում. կամ բարոյական, կամ կրօնական, դա միևնոյն է, որովհետև էութիւնը խօսքերի մէջ չէ կայանում։ Անկասկած է, որ ես կրօնական միութեան տակ չեմ հասկանում ոչ կաթոլիկութիւնը, որը կարող է ձեզ արտաքսել եկեղեցուց — պապի անսխալականութիւնը լով չը ճանաչելու համար, ոչ բողոքականութիւնը, ոչ յունական ուղղափառութիւնը, որը... Չէ կարելի ասել, որ նաև քրիստոնէական կամ հրեայ նախնական համայնքները ներկայանում են հասարակական կառաբեալ մի տիպ։

«Բայց չը խօսենք անցեալի մասին։

«Իսկ սօցիալիստները, անիշխանականները ճիշտ է, նրանց բացասական քննադատութիւնը արդարացի և խորապէս ուղիղ է։ Սակայն նրանց իդէաների հետ ապագայի վերաբերմամբ ես անկարող եմ համաձայնել։

«Այսպէս թէ այնպէս, Ռուսաստանի առաջ կանգնած են երկու հիմնական հարցեր.—յանձնել բոլոր հողերը գիւղացիներին, այսինքն անմիջական արտադրողներին, և մի հատիկ տուրք մացնել Ջօրջի սիստեմով։

«Այս երկու հարցերի լուծմամբ կը լուծվի և բանւորական հարցը։ Շինական հրնամարդութիւնը այլ ևս չի թողնի ընդարձակ գաշտերը, ուր կեանքը ազատ է և արձակ, և այլ ևս իր ոյժը չի քայքայի գործարաններում և ֆաբրիկներում։ Քաղաքակրթութիւնը ոչինչ չի կորցնի, եթէ մարդիկ վերջ ի վերջոյ համոզվեն, թէ ֆաբրիկային արտադրութիւնների 9-10 տոկոսը անօգուտ է։

«Ինձ կասեն, որ այդ բոլորը անհնթեթ ցը նորդներ են։ Այդ ճիշտ կը լինէր, եթէ խօսքը Անգլիայի մասին լինէր, ուր հարիւր բնակչին 10 գիւղացի է գալիս, և ոչ թէ մեզ մոտ, ուր գիւղացիները ազգաբնակութեան 99%-ն են կազմում։ Չէ կարելի իսկապէս պահանջել, որ մենք, ռուսները, յեղափոխութիւն անենք պրուսացիների օրինակով։ Գործենք մեր եղանակով, իսկ սահմանադրութեան նախագծերի քննութիւնը «made in France in England or in Germany» թողնենք Դումայի հոսանքներին։ Նրանց խոհարարական ըէցեպտները ինձ ոչ մի բան չեն ասում. լինելով ռուս, ես ցանկանում եմ ռուսական ուտելիք ունենալ...»։

ՏԻՈՒՐ ՓԱՍՏԵՐ

II

—Պարտաւոր ես գալ, երբ ես պահանջում եմ,—ասում է մարդ-ամուսինը։

—Չես գալ, կը ասեմ,—աւելացնում է փըրփրած ուսանող-ոստիկանը։

Իսկ խեղճ կինը կանգնած է ուժասպառ, յուսահատ։

Հազար անգամ է կրկնվել «չես սիրում», «չեմ կարող ապրել քեզ հետ» խօսքերը։

Բայց ի՞նչ նշանակութիւն ունեն դրանք բռնակալ ամուսնու համար։ Նա չէ ըմբռնում սիրոյ վսեմ պատգամը, չէ ճանաչում ընկերական պարտականութիւնը և նայում է իր կնոջ վրա իբրև մի ճորտի վրա, որին հին ժամանակ և բանեցնում էին, և անպատուում, և ծեծում։

Ո՞վ կարող էր պաշտպան հանդիսանալ։

Գաւազանի մի հարուածով ընկու ճորտութիւնը, իսկ խեղճ կնոջ վիճակը մինչև այժմ էլ մնում է նոյնը։

—Ինձ սէր չէ պէտք և ոչ էլ ընկեր,—ասում է ամուսինը։—Դու պէտք է լինես իմ կինը, իմ տարածը, սոսկ կամակատար իմ կրքերի ու քմահաճոյքների, զուրկ ինքնուրոյութիւնից և մարդկային արժանապատուութիւնից։ Եկեղեցական և իրաւական օրէնքներով դու ինձ ես պատկանում իբրև մի սեպհականութիւն, իսկ քո անհատական կամ ընկերական կարծիքը, քո սիրտը, քո զգացմունքը ինձ համար ոչ մի արժէք չունեն։

—Ես ուզում եմ, որ դու վերադառնաս ինձ մոտ,—ասում է ամուսինը։

—Չես գալ՝ օրէնքի ոյժով կը տանեմ,—սպառնում է ուսանող-ոստիկանը։

Դա հանրածանօթ ճանապարհ է. ոմ է հարցնում կնոջը. «դու ուզում ես, կը գա՞ս, թէ՞ ոչ»։ Իսկ ուսանողը.—ուսանող-ոստիկան!

Մարդ ապշում է ու կարմրում։

Մի թէ այդպիսի այլանդակ տիպեր էլ պէտք է լինեն նոր սերնդի ներկայացուցիչների մէջ։

Անհաւատալի է թւում գիւղացիների և լոյսի ծիրանու տակ տեսնել թաղնված ուսանող-ոստիկան։

Ոգեհարութեան մի կաթիլ անգամ չէ փայփայվել այդ անզգայ, քար սրտի մի խորշում, ապա թէ ոչ նա վայել չէր համարել իրանից խորշող, իրան չը սիրող կնոջը բընանի իր մոտ տանել, ոստիկանի միայն յատուկ սպառնալիքով. «չես գալ, կը տանեմ»։

Եւ թշուառ, աշխարհի անարդար կարգ ու օրէնքներից զզված կինը գնում է նրա ետևից։

Գնում է իր բռնակալ ամուսնու մոտ սարկուհու ծառայութիւն կատարելու, իր թունաւոր կեանքի տառապանքները նորից վայելելու և կամ թէ, զուցէ, թոյնի վիրջին բաժակը քամելու։

Եւ նրա միակ բողոքը խուլ անէծքն է։

Ինչպէս, ողորմելի էակներ. մէկը՝ իր հրամայող պահանջներով, իսկ միւսը՝ իր ճորտային հնազանդութեամբ։

Բայց երկուսն էլ ժառանգական անարդար կարգերի ու զատված օրէնքների զոհեր։

III

«Մոնարխիզմ, եթէ թոյլ ես ու չես կարող պաշտպանվել»։

Ահա գոյութեան պահանջը։

Լոմբ ու հնազանդվիր։

Գնա այնտեղ, ուր տանում են քեզ քո սեպհական կամքի հակառակ։

Ի՞նչ սէր, ի՞նչ ընտանեկան վայելքներ։

Դրանք միրաժ են.—գնա, բայց ոչ դրանց համար. գնա, որովհետև չես կարող չը գնալ. «չես գնալ, քեզ քարշ տալով կը տանեն»։

Ո՞ւր էր արդարութիւնն ու խիղճը այն ժամանակ, երբ վճռվում էր ապագայ սերնդի բաղդը, երբ կռվում-կռվվում էր այն ժառգոտ շղթան, որ այսօր օրէնքի անունով կաշկանդում է անհատի ազատ իրաւունքները։

Նա չը կար և այժմ էլ դեռ չը կայ։

Արդարութիւն, խիղճ, դրանք գեղեցիկ խօսքեր են միայն. կեանքի գոյութեան կռիւը բարոյականութեան կօդեքսներից չէ քաղում իր զէնքն ու զրահը. նա գնում է իր քմահաճոյքի, իր եսասիրական պահանջի մղումով։

Ինչ խիղճ, ինչ արդարութիւն կարող է լինել այնտեղ, ուր անարդարութիւնը բացարձակ իշխում է օրէնքի առաջ, ուր հզօրն ու հարուստը վայելում են յարգանք, հովանաւորութիւն։ Մինչդեռ թոյլը, հարատևարվողը մնում է իր կեղեքված վիճակում անպաշտպան։

Եւ այդ շերտի վրա է, որ այսօր յենվում է իր ծանրութեամբ կեղեքիչ անարդարութիւնը։

Քանի-քանի մարդկանց արիւն - արցունքներն ու դառն հեծեծանքներն են իրանց մէջ ամբարել հնութեան փոշիները լիզող այդ օրէնքի կօդեքսները, որոնք հզօրների գերիշխանութիւնն են միայն ապահովում այս աշխարհում։

Այդ անարդարութեան շնորհիւ է, որ այսօր մարդը համարձակվում է սպառնալ.

«Չես գալ, ոյժով կը տանեմ»։

Լ. Դանիէլեան

ԻՄ ՕՐԱԳՐԻՐԸ

III

Շուշի, սեպտեմբերի 16-ին

Այսօր ես իմացայ մի նշանաւոր դաղտնիք, որը մոռացութեան էր տուած մի քանի սանեակ սարիներից ի վեր։ Քաղաքի վերին դռների առաջ, զօրանոցի գլխավերևը ապրում էին 6—7 տուն թուրքեր։ Ինչու համար էին նրանք այդտեղ բնակութիւն հաստատել, ոը ժամանակից և ինչ պայմաններով, քանի որ դրանք քաղաքի թուրքերի մի մասն են կազմում և թուրք ու հայ սալում են անվան, գատ-գատ թաղերում, այն է՝ քաղաքի վերին մասը բռնում են հայերը, իսկ ներքին մասը թուրքերը. ահա հէնց դրա մէջն է դաղտնիքը։

Զը գիտեմ բանի տեղն ասացին, թէ ռուսաց եկեղեցու տեղը—որանից 50—60 տարի առաջ բնակվում էին այդ թուրքերը։ Երբ որ կառավարութիւնը քաղաքից տեղ է պահանջում եկեղեցու համար և այդ տեղն է յարմար գտնում, քաղաքը այդ թուրքերին յատկացնում է Թօլհար-աղի տան առաջ։ Բայց որովհետև այնտեղ այդ ժամանակներում բնակութիւն չէ լինում և թուրքերն իբր վախենում են գնալ նշանակված տեղը, ուստի խնդրում են ժամանակաւորապէս իրաւունք տալ իրանց զօրանոցի շուրջը բնակվելու, այն պայմանով, որ փայտակ տներ շինեն այնտեղ, կամ վրաններում ապրեն, մինչև որ իրանց յատկացված տեղերից կը մօտենան շինութիւնները և իրանք կը գնան ու այնտեղ բնակութիւն կը հաստատեն։

Պայմանը ընդունվում է։ Կազմվում է գրաւոր արձանագրութիւն և պահ տրվում գատառապետի դիւանում։

Թուրքերը, դեռ այն ժամանակ 2—3 տուն, տեղաւորվում են Երևանեան դռների առաջ։ Տասը, քսան տարի—և այդ տեղը նրանց համար աւետաց երկիրը դառնալով՝ մեղր ու կաթ է բղխում։ Քաղաքից դուրս Զառսլուն ու Թարիալուն, իսկ քաղաքի բերանում այդ 2—3 տունը. որքան յարմարութիւններ ամեն ինչ կատարելու. և առևտուր, և զողութիւն, և աւազակութիւն և՝ դաշղ—բոլորը հարստանալու միջոցներ, առանց խորութիւն դնելու այդ միջոցների մէջ...

Էլ ո՞վ կը հանէր դրանց այդտեղից։ Մարդիկ գերացան, ճոխացան, ոսկին ուռճացաւ և թղթի կտորը իր պարտաւորական կէսերով փակեց խանաս արխիվում, անհետ կորաւ, թաղվեց մոռացութեան մէջ. և այն մարդիկ, ժամանակի պաշտօնեաները, որոնց պարտականութիւնն էր կատարել տալ պայմանը՝ ակամայներին խլացրին չը լսելու համար և բերանները ջրով լցրին չը խօսելու համար։ Մէջտեղ ութ հարիւր բուբլու պատմութիւն կայ՝ դաւառական կանչելու ժամանակներից։ Մէջտեղ ծեծի ու դաղանակի պատմութիւն կայ բաղաքային դէպուտատների առանդական տարեդրութեան մէջ։ Դէպքերը առասպելների դարն են անցել, մարդիկ մոռացել են, մարդիկ մեռել... Ո՞վ էր եռեակից գնացողը, ում գարն էր կարվել...

Սակայն անցեալ տարվայ հայ-թուրքական կռտրածն ինքը կատարեց տեղափոխութեան ակտը։ Թուրքերը թողեցին այդտեղ ու փախան ներքև՝ իրանց թաղը։ Հայերը կրակ տուին նրանց տները, գնացին հետ հաւասարեցրին։

Եւ հնացած պատմութիւնը նորոգվեց։ Պահանջը, իրաւացի պահանջը, այսօր իր ամբողջ թափով կանգնած է մեր առաջ։ Բայց տեսնենք ինչպէս են նայում իրերի շուրջը։

Գիներալ Բաուէրի կարգադրութեամբ հայ և թուրք պէտք է վերադառնան իրանց տեղերը։ Փակագծի մէջ ասենք, որ «տեղը» ասելով մենք հասկանում ենք շրջանը, գիւղը, կամ քաղաքը և ոչ թէ այդ տեղերի այս կամ այն կողմը, մասը և այլն։ Իսկ «Դարվազի» թուրքերը կամենում են վերադառնալ իրանց աւետաց երկիրը...

Արդ, Շուշու հայ և թուրք հասարակութեան առաջ մի պատասխանատուութիւն կայ։—Նախ՝ ինչով են նրանք երաշխաւոր, որ այդ թուրքերն այդտեղ կը լինեն ապահով և երջանիկ, երբ դեռ վերջնականապէս չեն հանգստացել երկու ազգերի ոգիրը։ Երկրորդ՝ ինչու չեն պահանջում, որ նրանք վերադառնան ոչ թէ այդ «ժամանակաւոր» տեղը, այլ Թօլհար-աղի տափարակը, որտեղ արդէն հասել է թուրք տների ծայրը։ Երրորդ՝ ինչու է մոռանում քաղաքը, որ այդ տեղը. իրրև քաղաքական հող, պէտք է յետ տանայ առանց «զանսսաների» ձևակատութիւնների հետևելու։ Չորրորդ՝ ինչու չեն հասկանում, որ այդտեղ բնակութեան համար շատ անյարմար տեղ է և պէտք է յատկացնել կամ զօրանոցին, կամ թողնել ազատ քաղաքական հող, զբօսատեղի, արօտատեղի, կամ ուրիշ օրէնք բանի համար պէտք ածելու։ Հինգերորդ՝ առանձնապէս ինչու չեն հասկանում հայերը, որ թուրքերի բնակութիւնն այդտեղ մի չարիք էր հայերի համար։

Պէտք է հասկանալ, հասկացնել և բողոքել, որ այդ թուրքերը՝ հէնց ընդհանուր բարօրութեան ու ապահովութեան տեսակէտից՝ կրկին չը գան ու չը նստեն մեր գլխին, այլ գատեն այն տեղը, որը վաղուց յատկացրած է իրանց համար։

Մենք այդպիսով չենք դատապարտում նրանց հեռանալու հայրենիքից, այլ աւելի ապահով տեղ ենք մատնացոյց անում. նմանապէս և չենք ժխտում կառավարութեան հրամանը—քաղաքից դուրս գալու, այլ ուզում ենք դատալ աւելի էական, աւելի լեգալ իրագործման այդ կարգադրութեանը։

Հարկաւոր ու պահանջել, որ մարդիկ անպայման կերպով վերադառնան իրանց նախկին տեղերը, թոյլ չը տալ որ նրանք ընտրեն աւելի ապահով անկիւն՝ թէկուզ միևնոյն քաղաքի, աւանի կամ գիւղի մէջ, փոխադրած համաձայնութեամբ, կը նշանակէ նորէն բորբոքել վէրքը, նորէն վէճի, կռուի ու կատաղածի առիթներ ստեղծել, որը ընչ ցանկալի չէ երկու խստատ յոգնած, քայքայված ու անտեսապէս փչացած հարևանների համար։

Հաւատում ենք, որ ցանկալի չէ ոչ հային Թուրքի թաղում բնակութիւն հաստատել և ոչ թուրքին հայի թաղում։ Պէտք է այդ վերադարձը կամ տեղափոխութիւնը թողնել երկու ժողովրդի ազատ կամքին, իսկ նրանց անհամաձայնեան կէսերում միայն ընտրել կամ միջնորդ դատարաններ, կամ խնդրել կառավարութեան միջամտութիւնը։ Սակայն այս վերջին կէտը բնաւ «Դարվազի» թուրքերին չէ վերաբերում. մենք տեսանք, թէ նրանք ինչ պայմանների մէջ են ուզում վերադառնալ իրանց տեղը։

Կան գիւղեր, վայրեր ու տեղեր, որոնց փոխանակութիւնը հայ և թուրք սիրով կը յօժարեին կատարել։ Ինչու չանել...։

Մխսար

Ո՞Չ, ԱՅԴՊԷՍ ՉԷ

«Իրշադը» այս վերջին օրերում բաւական վատ դեր է սատանել։ «Ինչու՞ չեն ուզում համոզվել» յօդուածից յետոյ, անա ձեզ մի ուրիշը։

Ներկայ ժամանակում մեզ համար ամենակարևոր հարցը, անկասկած, թուրք-հայկական կռիվն է։

Ուսուցչական համաժողովը, դպրոցների բացումը, ընկերութիւնների հիմնարկութիւնը և այլ ուրիշ գործեր մեզ այնքան չեն զբաղեցնում, որքան հայ-թուրքական հարցը։ Որովհետև դա մի այնպիսի սոսկալի կրակ ու փորձանք է, որ այս ժամիս ամենը կողմ քիչ ու շատ պատելով վառելու վրա է, և այժմ օրեց օր բարդապէս և նիւթապէս իր ազդեցութիւնը աւելացնում է։ Հիմա ոը մարմին կարող է անցաւ լինել, երբ նրա անդամներից մէկը կտրված է և արիւնը հոսում է։

Ներկայումս մեր ամբողջ ազգային կեանքը ջրի մէջ ընկղմված՝ խեղդվելու վրա է։ Պէտք է, որ մենք ամենաարագ ձեռքով մեր օգնութեան ձեռքը երկարենք և նրանց փրկենք, նիւթապէս և գործնականապէս օժանդակութիւն ցոյց տանք և ոչ թէ հեռուից դիտելով փիլիսոփայական քարոզներ կարդանք։

Այս մասին, իհարկէ, ամեն մարդ մի պարտականութիւն, կատարելիք գործ ունի։ Դրոշների էլ պարքը, անշուշտ, խեղդվողներին օգնութեան փութացողներին անհնազանդ, ամենաարագ ճանապարհը ցոյց տալն է։ Ափսոս, որ մեր դրոշների մեծ մասը, ոմանք մահմեդականներին մխիթարութիւն և յոյս, ոմանք՝ հայերին քարոզ ու խրատ են տալիս։

Ի մէջի այլոց, երէկ «Իրշադում» տպված երկար յօդուածը կարդալով զարմացած մնացի։ Յօդուածագիրը իր յօդուածում հայերի անվայել վարմունքները մի առ մի թուելով՝ նրանց հրաւիրում էր հաշտութեան և ցոյց էր տալիս թէ հայ ֆիդայի կոմիտեաները որ ատիճան վնասակար և անօգուտ են իրանց ազգի համար։

Յարգելի յօդուածագրի քարոզը, ինքն ըստ ինքեան, մարդկային տեսակէտով՝ վերին աստիճան ընդունելի և գովասի արժանի էր. իսկապէս, հայ կոմիտեների դէպի մահմեդական հարևանները ցոյց տուած բռնութիւնն ու հարստահարութիւնը վայրենութեան ծայրագոյն աստիճանն է, և հայերի գործ դրած ճնշումները՝ հարևանութեան և մարդկութեան իրաւունքների վրա, միշտ անէծքով պիտի յիշվեն մարդկային պատմութեան էջերում։

Սակայն մէկ նայենք, տեսնենք այդ գեղեցիկ խրատները մեզ մագի չափ օգուտ և հայերի հեռաւոր ուղղութեան վրա ամենաչնչին ազդեցութիւն կարող են գործել։

Մինչդեռ, եթէ խորը մտածենք, այդ տեսակ յօդուածները՝ արդէն առանց այն էլ անդիկ ու անգլուխ մահմեդականներին թմբեցնելով՝ պատճառ պիտի լինեն, որ հայերը մի քիչ աւելի օգուտն առիթից։

Մի խօսքով, մենք, մահմեդականներս, եթէ ուղղութեան և ոյժի տէր հայերին դատարկ քարոզներ և խրատներ կարդալով, մեզ խաբենք, հայերին օգնելով մեր սեփական ազգը թշուառութեան մատնած կը լինենք։

Լաւ ըմբռնելու ենք այն, որ մի կողմի ակարութիւնը միշտ միւս կողմի համաձայնութեան և յարձակման առիթ կը լինի։ Իմանալու ենք, որ ուսման այս աստիճանում, միայն երկար քարոզներով և գեղհրաւէր խրատներով չէ կարելի հաշտութիւն և խաղաղութիւն պահպանել։

Աշխարհի պատմութեան վրա եթէ նայենք, որպէս մի հրահանգիչ օրինակի վրա, եթէ նեղատ ատենք այսօրվայ կատարվածները՝ Թուրքերը կամենում են վերադառնալ իրանց աւետաց երկիրը...

Արդ, Շուշու հայ և թուրք հասարակութեան առաջ մի պարտականութիւն կայ։—Նախ՝ ինչով են նրանք երաշխաւոր, որ այդ թուրքերն այդտեղ կը լինեն ապահով և երջանիկ, երբ դեռ վերջնականապէս չեն հանգստացել երկու ազգերի ոգիրը։ Երկրորդ՝ ինչու՞ չեն պահանջում, որ նրանք վերադառնան ոչ թէ այդ «ժամանակաւոր» տեղը, այլ Թօլհար-աղի տափարակը, որտեղ արդէն հասել է թուրք տների ծայրը։ Երրորդ՝ ինչու է մոռանում քաղաքը, որ այդ տեղը. իրրև քաղաքական հող, պէտք է յետ տանայ առանց «զանսսաների» ձևակատութիւնների հետևելու։ Չորրորդ՝ ինչու՞ չեն հասկանում, որ այդտեղ բնակութեան համար շատ անյարմար տեղ է և պէտք է յատկացնել կամ զօրանոցին, կամ թողնել ազատ քաղաքական հող, զբօսատեղի, արօտատեղի, կամ ուրիշ օրէնք բանի համար պէտք ածելու։ Հինգերորդ՝ առանձնապէս ինչու՞ չեն հասկանում հայերը, որ թուրքերի բնակութիւնն այդտեղ մի չարիք էր հայերի համար։

Պէտք է հասկանալ, հասկացնել և բողոքել, որ այդ թուրքերը՝ հէնց ընդհանուր բարօրութեան ու ապահովութեան տեսակէտից՝ կրկին չը գան ու չը նստեն մեր գլխին, այլ գատեն այն տեղը, որը վաղուց յատկացրած է իրանց համար։

Մենք այդպիսով չենք դատապարտում նրանց հեռանալու հայրենիքից, այլ աւելի ապահով տեղ ենք մատնացոյց անում. նմանապէս և չենք ժխտում կառավարութեան հրամանը—քաղաքից դուրս գալու, այլ ուզում ենք դատալ աւելի էական, աւելի լեգալ իրագործման այդ կարգադրութեանը։

Հարկաւոր ու պահանջել, որ մարդիկ անպայման կերպով վերադառնան իրանց նախկին տեղերը, թոյլ չը տալ որ նրանք ընտրեն աւելի ապահով անկիւն՝ թէկուզ միևնոյն քաղաքի, աւանի կամ գիւղի մէջ, փոխադրած համաձայնութեամբ, կը նշանակէ նորէն բորբոքել վէրքը, նորէն վէճի, կռուի ու կատաղածի առիթներ ստեղծել, որը ընչ ցանկալի չէ երկու խստատ յոգնած, քայքայված ու անտեսապէս փչացած հարևանների համար։

Հաւատում ենք, որ ցանկալի չէ ոչ հային Թուրքի թաղում բնակութիւն հաստատել և ոչ թուրքին հայի թաղում։ Պէտք է այդ վերադարձը կամ տեղափոխութիւնը թողնել երկու ժողովրդի ազատ կամքին, իսկ նրանց անհամաձայնեան կէսերում միայն ընտրել կամ միջնորդ դատարաններ, կամ խնդրել կառավարութեան միջամտութիւնը։ Սակայն այս վերջին կէտը բնաւ «Դարվազի» թուրքերին չէ վերաբերում. մենք տեսանք, թէ նրանք ինչ պայմանների մէջ են ուզում վերադառնալ իրանց տեղը։

Կան գիւղեր, վայրեր ու տեղեր, որոնց փոխանակութիւնը հայ և թուրք սիրով կը յօժարեին կատարել։ Ինչու՞ չանել...։

Մխսար

ՈՒՐԱԽ ԼՈՒՐԵՐ

«Իրշադը» այս վերջին օրերում բաւական վատ դեր է սատանել։ «Ինչու՞ չեն ուզում համոզվել» յօդուածից յետոյ, անա ձեզ մի ուրիշը։

Ներկայ ժամանակում մեզ համար ամենակարևոր հարցը, անկասկած, թուրք-հայկական կռիվն է։

Ուսուցչական համաժողովը, դպրոցների բացումը, ընկերութիւնների հիմնարկութիւնը և այլ ուրիշ գործեր մեզ այնքան չեն զբաղեցնում, որքան հայ-թուրքական հարցը։ Որովհետև դա մի այնպիսի սոսկալի կրակ ու փորձանք է, որ այս ժամիս ամենը կողմ քիչ ու շատ պատելով վառելու վրա է, և այժմ օրեց օր բարդապէս և նիւթապէս իր ազդեցութիւնը աւելացնում է։ Հիմա ոը մարմին կարող է անցաւ լինել, երբ նրա անդամներից մէկը կտրված է և արիւնը հոսում է։

Ներկայումս մեր ամբողջ ազգային կեանքը ջրի մէջ ընկղմված՝ խեղդվելու վրա է։ Պէտք է, որ մենք ամենաարագ ձեռքով մեր օգնութեան ձեռքը երկարենք և նրանց փրկենք, նիւթապէս և գործնականապէս օժանդակութիւն ցոյց տանք և ոչ թէ հեռուից դիտելով փիլիսոփայական քարոզներ կարդանք։

Այս մասին, իհարկէ, ամեն մարդ մի պարտականութիւն, կատարելիք գործ ունի։ Դրոշների էլ պարքը, անշուշտ, խեղդվողներին օգնութեան փութացողներին անհնազանդ, ամենաարագ ճանապարհը ցոյց տալն է։ Ափսոս, որ մեր դրոշների մեծ մասը, ոմանք մահմեդականներին մխիթարութիւն և յոյս, ոմանք՝ հայերին քարոզ ու խրատ են տալիս։

Ի մէջի այլոց, երէկ «Իրշադում» տպված երկար յօդուածը կարդալով զարմացած մնացի։ Յօդուածագիրը իր յօդուածում հայերի անվայել վարմունքները մի առ մի թուելով՝ նրանց հրաւիրում էր հաշտութեան և ցոյց էր տալիս թէ հայ ֆիդայի կոմիտեաները որ ատիճան վնասակար և անօգուտ են իրանց ազգի համար։

Յարգելի յօդուածագրի քարոզը, ինքն ըստ ինքեան, մարդկային տեսակէտով՝ վերին աստիճան ընդունելի և գովասի արժանի էր. իսկապէս, հայ կոմիտեների դէպի մահմեդական հարևանները ցոյց տուած բռնութիւնն ու հարստահարութիւնը վայրենութեան ծայրագոյն աստիճանն է, և հայերի գործ դրած ճնշումները՝ հարևանութեան և մարդկութեան իրաւունքների վրա, միշտ անէծքով պիտի յիշվեն մարդկային պատմութեան էջերում։

Սակայն մէկ նայենք, տեսնենք այդ գեղեցիկ խրատները մեզ մագի չափ օգուտ և հայերի հեռաւոր ուղղութեան վրա ամենաչնչին ազդեցութիւն կարող են գործել։

Մինչդեռ, եթէ խորը մտածենք, այդ տեսակ յօդուածները՝ արդէն առանց այն էլ անդիկ ու անգլուխ մահմեդականներին թմբեցնելով՝ պատճառ պիտի լինեն, որ հայերը մի քիչ աւելի օգուտն առիթից։

Մի խօսքով, մենք, մահմեդականներս, եթէ ուղղութեան և ոյժի տէր հայերին դատարկ քարոզներ և խրատներ կարդալով, մեզ խաբենք, հայերին օգնելով մեր սեփական ազգը թշուառութեան մատնած կը լինենք։

Լաւ ըմբռնելու ենք այն, որ մի կողմի ակարութիւնը միշտ միւս կողմի համաձայնութեան և յարձակման առիթ կը լինի։ Իմանալու ենք, որ ուսման այս աստիճանում, միայն երկար քարոզներ

բազարից պարաք վերցրի. մինչև անգամ Թոյլ չէ տուեցին վերադառնալու գիտը փող ճարելու. համաբ էլ մինչ անի ինձէս մի գիւղացի, որը տանց այն էլ ընկրկված է խոր հոգսերի մէջ. եկէ անմեղ տեղից 100 ռուբլի տուղանք վճարել, էլ քարը քարի վրա կարող է կանգնել։ Այս Թոդենը այստեղ և վերադառնանք վերջին զարմանալի դէպքին։ Մի ամիս առաջ վերոյիշեալ գիւղի ներկայացուցիչ Սողոմոնը գիւղամիջի հրապարակն է կանչում Ցեղ գիւղացի Աւակիմ Մարտիրոսեանին իր կին Հռուզանի հետ միասին. այդ խեղճ ամուսինները սրտատրոփ և դողալով ներկայանում են Սողոմոնին, որը հրամայում է իր վիճուրներին գնալ գիրեղմանատուն և սպանել մինչև բոլոր ժողովուրդը հաւաքվի, և ասիմամբ, թէ արու և թէ էգ, բոլորին հաւաքում են այնտեղ։ Եւ ինչ է անում փաշայ Սողոմոնը. մի զարմանալի, մի անտեսանելի բան. վերոյիշեալ Աւակիմին յայտնում է, որ քո կինը պտղնիկ է, և քեզ էլ նրա հետ միասին պէտք է պատժեմ։ Մարդը լացում, աղաչում է, թէ իմ կնոջ մէջ այդ բանը չը կայ և չի լինի, ինքը լաւ է ճանաչում իր կնոջը, եթէ այդպէս մի բան լինի, կարդ է ինքը, ինչպէս ամուսին, օր առաջ ցորոքիլ։ Չէ լսում ներկայացուցիչը այդ լացին, այլ հրամայում է, թէ մարդուն և թէ կնոջը մերկացնել բարոյվին։ Այդ երկու մերկին հրամայում է մէջքի վրա պակեցնել յիշեալ Աւակիմի հանգուցեալ հօր գերեզմանի վրա, և կէս պուտ վայրի բէնջար բերել տալով՝ հրամայում է չորս զինուորի անխնայ ծեծել այդ խեղճ ջանէլ կնոջ (Հռուռ) ծածուկէ մարմինը բէնջարով և ճիպտով, մինչև որ անշնչանում է այդ խեղճ կինը. նոյն ձևով առանց բէնջարի ծեծում են և մարդուն։ Երկուսը անշնչացած, կարպեսի մէջ դնելով, ժողովրդից մի քանիսը բերում են Թոդենի ծեծվածների տանը։ Աւակիմը երկու շաբաթից յետոյ մի քիչ առողջանում է, իսկ կինը (Հռուռին) աւելի ուշ։

Սողոմոնն շատ բաներ է մեր ժողովուրդը տեսել այս վերջին տարուը։ Այս վրդովեցուցիչ վարմունքի համար ժողովրդի խընդրելի համաձայն մի փոքրիկ նամակով յայտնեցի Նուշու գլխաւոր մարմնին, որպէս զի առնն անեն։

Դեռ մի բաւականութիւն չը ստացած Նուշու մարմնից յիշեալ օգոստոս ամսի 22-ին Գօրիսի լիազօր փաշան կանչում է իր մօտ մեր գիւղից քանի մի մարդկանց և Տէր-Յարութիւնեան քահանային ու յայտնում, «որ իբր ես ներկայացուցչի այդ արարմունքների մասին բերանացի և գրաւոր յայտնած լինեմ Գօրիսի գաւառապետին և գաւառապետը յայտնած լինի իրան՝ աղա լիազօրին»։ Եւ յայտնում է թէ՝ «ես գրել եմ Դաշնակ. գլխաւոր վարչութեան, որ իրաւունք տրվի ինձ Ն. Տէր-Սէակեանցին կամ տէրօրի տալ, կամ աքսորել ընդմիշտ հեռու երկիր. յայտնեցէք՝ որ իր գլխի հարը տեսնէ»։

Թէ կը կատարվի ինձ վրա այդ տէրտէրը կամ աքսորը, այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան. բայց երկաբ-բարակ մտածելուց յետոյ, վճռեցի մանրամասն յայտնել խմբագրութեանդ. Ինչ կը լինի ինձ նման բազմաթիւ ընտանիքի տրտմութիւնը, որ բոլորը իմ խնամքին են նայում. ոչ թէ ինձ են տէրտէրի տալիս, այլ ամբողջ մի ընտանիք, որ 15 հոգուց է բաղկանում։

Սրա համար մանրամասն յայտնում եմ պարտիի խմբագրութեանդ. թէ ինչ ձևով կարելի է լրագրութեան տալ, այդ թողնում եմ ձեզ, միայն թէ կեանքիս վնաս չը լինի։

Իսկ ինչ վերաբերում է իմ գրվածներիս, խոստանում եմ բոլորը փաստաբղէն հատատել։

Նիկոլայ Տէր-Սէակեան

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Տպագրելով Տեղ գիւղից գրված նամակը դաշնակցականների մի նոր սխալագործութեան մասին, մենք գժուարանում ենք հաւատալ կատարված իրողութեան, այնքան նա հրէշաւորէ։

Ամէն բան կարող էինք ենթադրել, բայց չենք կարող ենթադրել, որ մեր հակառակորդները, որոնց դէմ մենք իդեական, գաղափարական կռիւ ենք մղում, թեկուզեմամ մեր հասարակական պարտականութեան, պաշտպանութեան զգացումներից, թեկուզեմամ մեր խղճի և համոզմունքից, կարող էին գիտակցութեամբ մի անարժան, ժանդրոված և ամենամեծ բիւրօկրատային յատուկ մի գէնքի, որպիսին հանդիսանում է բոյկոտը հակառակորդի դէմ։

Բոյկոտ հրատարակել մասուլի դէմ—դա նշանակում է սպանել խօսքը, դա նշանակում է սպանել միտքը։

Սպանել միտքը.... Զգում էք թէ ինչ ոճրագործութիւն է դա. զգում էք, թէ ինչ ծանր ենթադրվում։ Չէ որ դուք կատարում էք նոյնպիսի սիրագործութիւն, որպիսին կատարում է բիւրօկրատիան, երբ զանազան ճնշումներով, խափանումներով կամենում է խեղդել մամուլի ձայնը, մեռցնել ազատ քննադատութիւնը և անդամալուծել օպոզիցիայի գործունէութիւնը։

Չը կարողանալով կուել մեզ հետ ազատ, հաւասարաչափ, դրական բանակռուվ, իրէնց հողի վրա, ապնիս և ուղիղ ճանապարհով, դուք կամենում էք յաղթել մեզ այնպիսի հանցագործ, որպիսին է՝ մելիտաական ճանապարհով սարկել մարդկանց չը կարդալ մեր լրագրերը որ ձեր հակառակորդն էք հանդիսանում։

Դուք էլ մենք գժուարանում ենք հաւատալ բայց դժբաղդաբար, Տեղի նամակը մեզ հաղորդում է այն ցաւալի մասի հետ, որ գաղիրի ներկայ դէպքում իրանց գաղափարական հակառակորդին տապալելու համար և նոյն իսկ միտքը, խօսքը սուսկալի ոճրագործութեան ենթարկելու համար։ Մեզ հաղորդում են և մի ուրիշ փաստ, որ ապացուցանում է մեր հանցագործութիւնը։ Դաշնակցութեան ներկայացուցիչներ բոյկոտ հրատարակելու «Մշակին» և գանվել են կոմիտէտներ, որոնք հրաժարվել են հնազանդվել այդ հրամանին։

Անկեղծ և խորին կը լիներ մեր ուրախութիւնը, եթէ մենք իմանայինք, որ Դաշնակցութեան գէթ այն վարիչները, որոնք հանդիսանում են և մամուլի և գրականութեան գործիչներ, մաքի դէմ կատարվող ոճրագործութեան մասնակից չեն եղել և չեն արատաւորել հայ գրչի ու մամուլի պատիւը։

Մենք Թոդենում ենք հասարակութեան անաչառ դատաստանին դաշնակցականների այդ նոր սխրագործութիւնը, ինչպէս նոյն հասարակութեան քննութեան ենք ենթարկում և միւս քաղաքացիական ու զարհուրելի փաստը—հայ կընոջ գանահարելու փաստը, որ հարորվված է նոյն նամակի մէջ։ Եւ այդ զզուելի ոճիրը կատարվել է յանուն բարքերի մաքրութեան, յանուն ընտանեկան սրբութեան և բարոյականութեան։

Որպիսի արագիքական հակասութիւն!

Մի կողմից բարոյական հեշակել հայ կնոջ ազատութիւնը, էմանսիպացիան, ցնծութեան ազաղակներ բարձրացնել, որ հայ կինը ևս քուէարկութեան իրաւունք է ստացել և հետ. հետէ ազատվում է սորկական վիճակից, միւս կողմից—սարուակի վիճակի ենթարկել այդ կնոջը, անարգական պատժի ենթարկել և ոանկախ անել նրա մարդկային ամէն արժանապատուութիւնը։

Հաւատացած ենք, որ մեզ առարկելու են նախկին, շարունակ կրկնվող երգերը.—«Ինչ անենք, մեծ կազմակերպութիւն է, անարժան և անպիտան մարդիկ ներս են սողսկել և գժուար է նրանց զգալը»։ Բայց պատժեցէք այդ անարժաններին և ոչ բոլորդողներին։ Իսկ ինչով բացատրել բիւրօի շրջաբերականը։

Ոչ, պարոններ, սթափվեցէք. ձեր բոլոր շրջաբերականները, ձեր բոլոր զինուորները, միլիտարական ամբողջ ոյժը անկարող կը լինեն կանգնեցնել մաքի, ազատ խօսքի յաղթական ընթացքը։

Այդ ժամգոտած զէնքը չէ, որով դուք կարող էք կուել մեզ հետ։ Ընտրեցէք կռուի ազնիւ, մաքուր և ուղիղ ճանապարհ. մի դատաճանք գաղափարին։ Դաշնակցութեան անուան վրա մի աւելացնէք միտք և խօսք սպանողի անունը։

ԲՅՈՂՈՔ

Նահանգական բանտի հայ բանտարկեալներից

Յարգոյ խմբագիր, խոնարհաբար խնդրում ենք նահանգական բանտի հայ բանտարկեալներս, ձեր պատուական «Մշակ» լրագրի էջերում տեղ տաք մեր արդար բողոքին։

«Աչքից հեռացած—մտքից մոռացած» ասում է առածը։ Այսօր մենք նոյն մոռացված մարդերն ենք դարձել հայ հասարակութեան աչքում։

Բանս... սոսկալի է քո անունը, բայց նոյնքան ցաւալի է հայ բանտարկեալների դրութիւնը։ Երանի՜... հազար երանի նրանց, որոնք ազատ են բանտից, ուրախ երկիրը գնում են, ցանկալի դէմքերը տեսնում են և յայտնում իրանց վշտերը։ Իսկ մեզ մնում է միայն մամուլի միջոցով յայտնել եղբայրաբէր հայ հասարակութեան մեր ցաւն ու վիշտը, որոնք օր օրի վրա բազմանալով կրկնապատկում են մեր անբուժելի վէրքերը։ Զուրկ մնալու աշխատանքից, զուրկ հոգևոր մխիթարութիւնից, անցնում են օրեր, ամիսներ և մինչև անգամ տարիներ... Բանտը զուրկ է գրադարան-ընթերցարանից. մարդը գիտեցածն էլ մոռանում է և բթանում։ Թէպէտ կան տեղիս եկեղեցու մի անկիւնում, Թոդի ու փոշու մէջ կորած, անխնայ կեղծով թափված մի քանի հատ ու կտոր գրքոյկներ, այն էլ առանց սկզբի կամ վերջի։

Այժմս գտանենք դէպի հայոց եկեղեցին։ Նա կառուցված է բանտի գաթի անկիւնում, հարաւային կողմը, և ունի քառակուսի ձև (երկու սաժէն երկարութիւն և նոյնքան լայնութիւն), այն էլ խարխուլ գրութեան մէջ։ Տեղիս եկեղեցում ժամերգութիւնը կատարվում է շաբաթը մի անգամ (երբեմն երկու շաբաթը մի անգամ), այն էլ կիրակի առաւօտները։ Բայց ինչ ժամերգութիւն. ոչ թէ ըստ աւուր պատշաճի, ինչպէս պէտք է, այլ ինչպէս ինքը քահանան կը կամենայ։ Տեղիս եկեղեցին հովում է հայր Գրիգոր քահ. Մարտիրոսեանցը, որը թէ իր կոչումով և թէ մասուր զարգացմամբ բոլորովին չէ համապատասխանում բանտարկեալների ողբալի վիճակին։

Չը պէտք է մոռանանք, որ բանտարկեալների թեամբ կան և այնպիսի անձնաւորութիւններ, որոնք զուրկ չեն մասուր զարգացողութիւնից, որոնց համար սուրբ է, անխախտելի է նահապետական օրէնքը, որոնց համար ազգը, կրօնը և եկեղեցին նոյն նշանակութիւնն ունեն, ինչպէս ամէն մի կրօնասէր անհատի համար։ Կրկնում եմ խօսքս, որ կան անհատներ բանտարկեալների թեամբ, որոնք խէթ աչքով չեն կարող նայել կրօնական ծէսերի վրա, բայց տարաբաղդաբար և ցաւօք սրտի պէտք է յայտնել, որ այդ անհատները զրկված են իրանց բոլոր իրաւունքներից. նրանք միայն գառն հառաչանքներ են արձակում բանտի խուլ անկիւնից, բայց ա՜ւաղ... այդ հառաչանքները մնում են անհետանալք և մնանում անսպատասխ, ինչպէս «ձայն բարբառոյ յանապատի»։

Չը նայած որ ժամերգութիւնը բանտի եկեղեցում, ինչպէս վերև յիշեցի, կատարվում է կիրակի առաւօտները, այնուամենայնիւ բանտարկեալները զրկված են «Առաւօտ լուսոյ» և «Արի Տէր»-ի հրաշալի եղանակը լսելուց։ Մեր կարծիքով կամ այլ ևս գոյութիւն չը պէտք է ունենայ սրբոց գրքերի մէջ «Առաւօտ լուսոն», կամ հոգևորով ծանրաբեռնված «բարի» քահանան բանը գալիս անշուշտ ամէն Թոդած պէտք է լինի և կամ, որը աւելի հաւանական է, «անարժան» բանտարկեալների համար աւելորդ շռայլութիւն պէտք է լիներ «Առաւօտ լուսոն»։

Օրերից մի օր «բարի» քահանայից հարցրինք թէ՝ ինչու երբեմն շաբաթ երեկոները չէ այցելում բանտը, որպէս զի երբեմն արժանի լինենք «Լոյս զուարթը» լսելուն. պատասխան ստացանք թէ՝ երեկոները սաստիկ «շոգի» պատճառով չէ կարողանում գալ. կարծեմ ուղիղ է, սէր-Գրիգորը հայր. ուրեմն սառցէք խնդրեմ, հապա ով հանգցնելու է մեր սրտի վառ կրակները, եթէ ոչ դուք. մի՞թէ մենք էլ նոյն «շոգի» մէջ չենք տարակվում... Ինչու էք զանց առնում ձեր տէրտէրները, որոնք հրաժարվել են հնազանդվել այդ հրամանին։

Անկեղծ և խորին կը լիներ մեր ուրախութիւնը, եթէ մենք իմանայինք, որ Դաշնակցութեան գէթ այն վարիչները, որոնք հանդիսանում են և մամուլի և գրականութեան գործիչներ, մաքի դէմ կատարվող ոճրագործութեան մասնակից չեն եղել և չեն արատաւորել հայ գրչի ու մամուլի պատիւը։

Մենք Թոդենում ենք հասարակութեան անաչառ դատաստանին դաշնակցականների այդ նոր սխրագործութիւնը, ինչպէս նոյն հասարակութեան քննութեան ենք ենթարկում և միւս քաղաքացիական ու զարհուրելի փաստը—հայ կընոջ գանահարելու փաստը, որ հարորվված է նոյն նամակի մէջ։ Եւ այդ զզուելի ոճիրը կատարվել է յանուն բարքերի մաքրութեան, յանուն ընտանեկան սրբութեան և բարոյականութեան։

Որպիսի արագիքական հակասութիւն!

Մի կողմից բարոյական հեշակել հայ կնոջ ազատութիւնը, էմանսիպացիան, ցնծութեան ազաղակներ բարձրացնել, որ հայ կինը ևս քուէարկութեան իրաւունք է ստացել և հետ. հետէ ազատվում է սորկական վիճակից, միւս կողմից—սարուակի վիճակի ենթարկել այդ կնոջը, անարգական պատժի ենթարկել և ոանկախ անել նրա մարդկային ամէն արժանապատուութիւնը։

Հաւատացած ենք, որ մեզ առարկելու են նախկին, շարունակ կրկնվող երգերը.—«Ինչ անենք, մեծ կազմակերպութիւն է, անարժան և անպիտան մարդիկ ներս են սողսկել և գժուար է նրանց զգալը»։ Բայց պատժեցէք այդ անարժաններին և ոչ բոլորդողներին։ Իսկ ինչով բացատրել բիւրօի շրջաբերականը։

Ոչ, պարոններ, սթափվեցէք. ձեր բոլոր շրջաբերականները, ձեր բոլոր զինուորները, միլիտարական ամբողջ ոյժը անկարող կը լինեն կանգնեցնել մաքի, ազատ խօսքի յաղթական ընթացքը։

Այդ ժամգոտած զէնքը չէ, որով դուք կարող էք կուել մեզ հետ։ Ընտրեցէք կռուի ազնիւ, մաքուր և ուղիղ ճանապարհ. մի դատաճանք գաղափարին։ Դաշնակցութեան անուան վրա մի աւելացնէք միտք և խօսք սպանողի անունը։

ԶՈՒԼՈՒՄԻ ՑՈՒՇԵՐԻՑ

I

Անվերջ էր զուլումը... Սուրը չէր բթանում, արիւնը չէր դադարում։ Եւ սակայն դարերի սարուկը ընդվզումի անօրինակ կրքով մի քանի օր ետ դարձրեց անպատիժ սրի հարուածները... Վանը ազամիկի ինքնավար, ազատ օրեր տեսաւ։ Բանտատեղ ժողովուրդը իր հրազը իրականացրեց... 5 օրով. և այդ օրերը. անվերջ օրօրների, իրակաւոր Թաթի ուժգին ժայթքումի բոպէին, աւանդական զգացմունքի յորձանքի հէնց առաջին բաղխումին՝ կաշկանդող կապի ընդդէմ... չթացել էր արդէն խաբեպատիր նը-շոյը ազատ հայրենիքի...։ Հրդեհվող քաղաք, խանձոտված դիակներ, ամայի օջախ։

Հակահարուածն անդիմադրելի էր. զգայուն ժողովուրդը տարով ծերացաւ։

II

Դատարկվում էր մեր Վանը. անհնար էր մոռանալ մօտիկ անցեալ պատկերը։

Դատարկվում էր Վանը սրանից ուղիղ տասը տարի առաջ, սեպտեմբերի 15-ին։ Մեր կարավանը ոչ սկիզբ ունէր, ոչ վախճան. նա դատարկում էր մեր սիրտը, մի սիրուն ու հիմնաւոր բոյն, որի հաւը չը կայ, որի այրեսաւեր, անկրակ մարած օջախը ցնցեց ամբողջութեան հիմնաքարը։

Օ՜հ, օրերը. օրեր վշտի ու անյուսութեան, որ ծանրաբեռնում էին մեր կարաւանի հաւատարիմ անարիւն սրտերը. կարաւան. Ջարդ ու փշուր, խարխուլ ու անարցունք սուուերներ շանթահար արարածներ։

Գնում ենք, հա գնում, Աւետեաց երկրին չենք հասնում։ Թւում է, թէ գերադոյն դատապարտութեան մատնված, մենք շարժվում ենք անդուլ անցնում ենք անվերջ, չէ մաղվում մեր յոյսը, չէ էլ պրծնում մեր ուղին։ Տարտարոսեան տանջանքներ։ Մենք գնում էինք. բայց մնում էինք նոյն տեղում։

Մենք դեռ մեր եռևում տեսնում էինք սևացած պատեր, խանձված ծառեր, աւերակ քաղաքը։ Ծուխը դեռ չէր պակասել. շիվանը դեռ չէր դադարել... Մենք գնում էինք, հա գնում, ոչինչ չէր փոխվում, ոչինչ չէր մոռացվում. ամէն բան նոյն, ամէն ինչ առաջվայ պէս։

Հինգ անգամ մթնել ու լուսացել էր, հինգ անգամ հանդչելու ճանապարհ ընկել, բայց դարձեալ մեզ թւում էր թէ առաջին օրն է, որ անցնում է։

III

Լայնատարած դաշտ է մեր կայանը. կարաւանը կանգ է առնում հանդչելու։ Մենք թափվում ենք իրար վրա, ոլորան հնաբ է իրար կպած, մտաթիկ. ոչ մի ձայն հաղարաւոր մարդկանցից։ Ամէն ըսպէ երկիւղած զգուշաւորութիւն. ամէն սիրտ նոյն ցաւով սեսրատած։ Շատ մտաթիկ է մեր գաղան դահիճների որդը. նրանց չը պէտք է հանի մեր ձայնը. մենք ունենք վաւերագրեր, բայց պէտք է գողի նման վախկոտ լինենք։

Սկսվում է աշխատանքը, մնուտի անհոգ ժեշտ գործեր, դարձեալ շղուկով, գողն ի գող։ Ի՞նչ մարդիկ էինք մենք. խրատուիլ, կանաչրդված ոգիներ։

Արդէն ներեցում են ամենք, բայց աչքերով. ինչ լռութիւն է. կարծես դաշոյ ամայի լինի, կամ այդ հաղարաւոր կենդանի արարածները մի կանարդական շնչով քար կարած լինին կարծես։ Ասես կեանքը այդ բազմաթիւ կեանքերի մէջ բացակայում էր։ Ի՞նչ լռութիւն է. հոմն էլ է լռել, սաչն էլ է լռել, դաշտ, ձոր, գետեր. լուսինն էլ այնքան պնդ է, այնքան ցուրտ։ Բլուրի գլխին գայլերի վոհմակն է շրջան կազմել, հերթով երգում են իրանց սարսեցնող, գիշատիչ ընդդէմ մահերգը. երբեմն նրանց միահամուռ խմբերգը այնպէս զարգանդ էր ազդում, այնպէս անդիմադրելի լալկան էր հնչում, որ նիրհածները սեղմուռեղը ցնցվում էին...

Լավից մի խուլ որոտ. գիշերվայ խոր լռութեան մէջ կրկնվեց արձագանքը մի քանի անգամ...

Մէկ անգամից մահասարսուռ անցաւ ներհած հազարաւոր գլուխների վրայով, որոնք բոլորն էլ քար կարած դուրս են ցցվել ծածկոցների տակից... Ամբողջ դաշտ՝ խիտ առ խիտ գլուխներով, բաց բերաններով, ապուշ աչքերով սարսարոսի գանգերի կայան էր յիշեցնում... Նրանք բոլորն էլ, արտաքսի օրերի ընթացքում կմախք էին դարձել։ Արձագանքը դեռ թնդացնում էր ձորերը...

Լռեցին գայլերը. նրանք էլ վախեցան որոտից։ Այդ ի՞նչ ձայն էր...

Ահա և երկրորդ որոտը, աւելի մօտիկ, աւելի պարզ... Հրացանների համազարկ էր... Դատարկվեց դաշտը. մենք փախչում էինք ամէն ուղղութեամբ, մենք փախչում էինք անձայն, խելագար ուժաստութեամբ։ Մենք փախչում էինք թոված մերձաւորներին, թոված ամէն ինչ, բաց գլխով ու բաց ոտքով...

VI

Լուսանում էր։

Մենք գնում էինք ճանապարհ։ Հակայական կարաւանը ցրիւ էր եկել։ Կազմել էին խմբակներ...

—Վահան, զանը Արշակին. կարելի է միւս խմբումն է...

—Չէ, չը կայ ոչ մի տեղ. նա սարերում կորաւ... ով գիտէ գուցէ գայլերը...

—Գարեգին, մեր Ամբատին տեսել ես... նա հիւանդ էր, չը կարողացաւ փախչել... Մեր առջևից մի կողմ փախան գիշերվայ գայլերը... խեղճ Ամբատը չը կարողացաւ ձորից դուրս գալ...

V

Այս խօսքերը ասվում են այնպէս անկարեկից սրտով, անզգայ զգացմունքով... Ո՞վ էր ուրախ իր կեանքով. մի՞թէ իրանք արդէն տարբեր էին խանձված դիակներից, գիշակեր գազանների հարիւրաւորներից, անգերեզման հարբարատներից... Թող մի քանին էլ գայլերին կեր դառնային... Ի՞նչ պիտի բերէր նոր իջնող գիշերը. իրանց գլխին...

Միայն կոշտացած ոտքն էր, որ քայլում էր. դժոխք դարձած վաթանից խոյս տալու, հեռանալու բոլոր տենչն էր նրանց ոյժ տուողը. նրանց ինչ փոյթ կորստաբեր հետևանքը իրանց տխմար փախստականութեան. միայն ներկան, արիւնաղանգ ներկան էր մատչելի նրանց եղծված ըմբռնողութեանը... նրանք փախչելու անդիմադրելի մանիայով էին բռնված, նրանք ընազդի անդիմադրելի ոյժով առաջ էին տարվում։

VI

«Հէյ, դարիրական ախպէր. դէպի ուր այդպէս հեռին շտապում ես. վարատական եղած տարվում ես տաղեղի նման. չէ՞ որ դու ուրնես մի վաթան այնպէս հրաշալի, այնպէս նուիրական. դու քո խակ ձեռքով քար ու քանդ ես անում քո անքակտելի ժառանգութիւնը... Մի՞ փախչիր»։

Ի զուր. նա երբէք ետ չէ նայում...

Մօտ է սահմանը, տեսնչալի Աւետեաց երկիրը։ Եւ անա բոլորը երջանիկ են զգում իրանց փրկութեան մասին։... Դառնում են դէպի ետ վերջապէս առաջին անգամ. նոր ոյժ ու հայոյանքի խօսքեր են տեղում դէպի արիւնոտ երկիրը. Թքում են... Ի՞նչ անամութիւն. որքան յիմար էինք մենք բոլորս այդ բոպէին. ամենքս էլ կուրացած, ամենքս էլ յիմար։

Ապա վերջապէս մենք շրջում ենք ազատ. ու այն ժամանակ նոր մեզ բռնում է կարօտի ու ափսոսանքի զգացմունքը. չէն երկրի տեսքը մեզ յիշեցնում է մեր նախկին հայրենիքը, ոչ այրեացաւեր, այլ ուռճացած ու բարեկիր հայրենիքը, որից զրկվելու գիտակցութիւնը տանջել է սկսում մեր հիւանդ միտքը։ Պանդուխտի անձուկը տիրում է մեզ. զգում ենք, որ ազատ ենք լաց լինելու. կարող ենք գոնէ առաջին բոպէները, որ անցնում ենք ազատ երկրում, նուիրել մեր հայրենիքի ողբին. մենք այդ չէինք կարողացել անել իր տեղում, հրդեհված հայրենիքում, որովհետև այնտեղ ողբալու բան չէինք թողնում։

Կազդուրված ոյժերով մենք շարժվում ենք առաջ, դէպի ազատ երկրի ծոցը. և մեր բոլորիս աչքը արցունքով է լցվել առաջին անգամ զուլումի օրերից ի վեր։

Գալուստ

Թիֆլիս, 15 սեպտեմբերի

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սա քանիերորդ անգամն է, որ «Մշակի» համարներում կարգում ենք զանազան տեղերից գրված նամակներ, որոնք քննում են մեր արդի վիճակը և բողոքում են նորանոր խլգածների, հայրենի բիւրօկրատ կազմի դէմ։ Այդ բողոքները պարզ ու հասկանալի են։ Սակայն ինձ մի բան անհասկանալի է մնում. դա այն է, որ դաշնակցական դեկավարները չեն ուզում հասկանալ մեզ յուզող և վրդովող խնդիրը, դեռ շարունակում են չը զլխել ժողովուրդի բուռն բողոքներին և միանգամայն մոռացութեան են տալիս, որ ծրագիրը ապօրինի է ծնվել, բայց գործադրվում է յամառ կերպով. մենք լաւ գիտէինք և գիտենք, թէ ինչու համար է ստեղծվել Դաշնակցութիւնը և հրատեղ է նրա գործունէութեան վայրը։ Դաշնակցութեան ընդունված և հաստատված ծրագրի մէջ չը կայ մի կէտ, որ պահանջէր գործադուրների կազմակերպութիւններ և թերատ մշակված ֆեդերատիվ-ռամկավարական կազմակերպութիւն։ Սակայն ցաւ ը սրտով պէտք է ասել որ, մեր վարչական մարմնի դեկավարները, որոնց մենք դաշնակցականներս յանձնել էինք մեր գործերը, ուրիշ հովերի ենթարկվեցին և գլխաւոր գործը մոռացան և ուրացան։

Զինուոր Յ. Վ.

Լայպցիգ, 18 սեպտեմբերի

Սթափվեցէք...

Լայպցիգի Հայ Ճեմարանական ընկեր. վարչութիւնը յիշեցնում է երկրորդ անգամ իր նախկին անդամներին, որոնք ընկերութեան կասայինն արդէն վարուց են պարք, ժողովի վճիռը, որը տեղի է ունեցել օգոստոսի 25-ին ի նկատի առնելով որ ընկերութեան կասան ունի հին պարքեր, որոնք թողել են մեր նախորդները, և գլխաւորը, որ նա այժմ գտնվում է մեծ նեղութեան մէջ, հրաւիրում է նրանց ի գործ դնել իրանց պարտական աչութիւնը համապատասխան այն նամակների—заказное, յունիսի 27-ին Ն. տ., որոնք ուղարկված են յիշեալ պարտապաններին, և շտապել պարքերը վճարել կամ գրաւոր բացատրութիւն տալ մինչև հոկտեմբերի 10-ը Ն. տ., հակառակ դէպքում ընկերութիւնը ստիպված կը լինի ուրիշ միջոցների դիմել։

Նախագահ՝ Յոսէփ Միրզոյան

Հասցէն՝ Iosef Mirsoian, Leipzig, Zeitzerstr. 55 III։

Խնդրում ենք նաև միւս հայ թերթերին արտատպել այս ազդը։

Թիֆլիս, 14 սեպտեմբերի

Որքան ինձ յայտնի է Ներսիսեան դպրոցի քարտուղարի և հոգաբարձուներից մէկի խօսքերից, ուսուցչական հարցը հայոց հոգևոր դպրոցում արդէն սպառված է, ուսուցիչների կազմը լրացած, հներից թողնված են բոլորը, բացի 6 հոգուց։ Բան երեսդիմեն հոգաբարձութեան առաջ ոչ մի դժուարութիւն և արգելարութիւն չը կայ՝ ընտրել նոր դասատուներ, քանի որ առաջարկութիւններ աւելի կայնն, քան պահանջ։

Ինչպէս յաճախ խօսքը տարբերվում է գործից։

Յիշեցէք, ընթերցողներ, «Յառաջի» և «Ալիքի» այն գեղեցիկ յօդուածները, որ պատրաստվում էին մեր դպրոցական գործի առիթով, պերճախօսութեան բարձր սուռսով։

Մեր կեանքը պէտք է վերանորոգվի իր բոլոր մասրամասնութիւններով. նա պէտք է բոլորովին երիտասարդ, թարմ հոսանքով խիթէ, դէն շպրտէ բոլորը—ինչ որ հին է, իր դարն անցած, և համարձակ առաջանայ արդարադատութեան ճանապարհով։

Ինչպէս ձեզ յայտնի է, վերածնութեան ուղին մնաւ և մեր դպրոցական կեանքը, ասպարիզում երևացին նոր մարդիկ՝ նոր շարքով և նոր կօշիկներով, սակայն, միանգամայն գիտադարաբար, հին «սկզբունքներով, բիւրօկրատական նեխված կարգ ու կանոններով։

Ես, մէկը նոր սերնդի ներկայացուցիչներից, դիմում եմ ձեր խղճին և խնդրում եմ ձեռքը դրած սրտին—պատասխանել հետևեալը.—Նոր դասատուների ընտրութիւններին չէք դեկավարվել արդեօք խնամիութեան բիւրօկրատական սկզբունքով, և ինչպիսի բարոյական բաւարարութիւն տուիք այն դասատուներին, որոնք չը մտան Ներսիսեան դպրոցի ուսուցիչների թւում։

Դաշնակցական

—

Թիֆլիս, 21 սեպտեմբերի

Խնդրեմ տպէք «Մշակում» հետևեալ երկտողը։

«Նոր Խօսք» թերթի № 14-ում տպված է «Հաղրատցի» ստորագրութեամբ «Նամակ Հաղրատից», որ պարունակում է ծանր զրպարտութիւն իմ մասին։

Այսօր դիմեցի «Նոր Խօսք»-ի խմբագրութեան՝ խնդրելով յայտնել նամակագրի իսկական անուն-ազգանունը, որպէս զի դատի ենթարկեմ զրպարտչին։

Երդուեալ հաւատարմատար՝

Տիգրան Յովհաննիսեան

Ծանօթ. խմբ.—Որպէս զի մեր ընթերցողներին յայտնի լինի գործի էութիւնը, առաջ ենք բերում այստեղ «Նոր Խօսք» թերթի մէջ տպված նամակը։

«Հաղրատ գիւղի ագրարային շարժման հետևանքը ինչպէս յայտնի է վերջացաւ տասնեակ գիւղացիների և տեղական քահանայ Յ. Երզնկեանի բանտարկութեամբ։ Այս փոքրիկ նամակիս մէջ կանգ չեմ առնի այդ հերոսական կռուի պատմութեան վրա, այլ ուզում եմ հրապարակի վրա դնել մի շատ բնորդ փաստ։ Ազգային փաստաբան սօցիալիստ Տ. Յովհաննիսեանը յանձն առաւ գիւղացիների դատը ձրիաբար, նրա հետ և մի քանի ուրիշ փաստաբաններ։

«Սակայն շուտով պ. Յովհաննիսեանը յայտարարեց մեզ, որ անհրաժեշտ է Պետերբուրգից հրաւիրել մի հմուտ փաստաբան, որ ինքը արդէն բանակցութիւնների մէջ է, և դրա համար հարկաւոր է մի որոշ դումար. սկզբում յայտարարից 500 ր. և յետոյ հայցրից 1500 ր.։ Մեր խեղճ քայքայված գիւղացիները ծախեցին իրանց վերջին ունեցածը՝ ուղարկելու համար իրանց համաքաղաքացիներին. և յանձնեցին Տ. Յովհաննիսեանին 1200—1500 ռուբլի։

Սակայն ի զարմանս բոլորի Պետերբուրգից փաստաբան չեկաւ։ Տ. Յովհաննիսեանը իր սաեով «ձրիաբար» պաշտպանեց. իսկ թէ ինչ արեց գիւղացիներից «խորամանկութեամբ» պոված դումարը, այս մասին խնդրում ենք սօցիալիստ ազգային փաստաբանին հարցնել։»

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նուշում ապրող՝ Պետական Դումայի նախկին պատգամաւոր՝ բժ. Ե. Բ. Բասարգինանը միջնորդութիւն է յարուցել Կովկասի գլխաւոր վարչութեան առաջ—թոյլ տալ երդ.-հաւատ. Բ. Մ. Դոլուխանեանին ստորագրութիւն բանալ հացահատիկներ ժողովելու յօգուտ Գանձակի նահանգի կարեկցների, Նուշու, Զանգեզուրի և Ջիվանշիրի գաւառների սովալ հայ ազգաբնակութեան, որոնք ՀՅԴ-ական ելել են վերջին տարիների անբերրութիւնից և հայ-թուրքական ընդհարումներից։

—

Կովկասի Փոխարքան մերժել է Նախիջևանի գաւառի Կիվրալ, Ղարաբաղլար և Նախիջևանի գիւղերի հասարակութիւնների հաւատարմատարների միջնորդութիւնը, որոնք խնդրել էին վերացնել այդ գիւղերի բնակիչների վրա նախկին ժամանակաւոր գնդ.-նահանգապետ պրինց Նապոլէոնի կողմից նշանակված 1500 ռ. տուգանքը, զինուորական կամանդայի դէմ զինված ապատամբութիւն գործելու և կօզակները սպանելու պատճառով։

—

Սեպտեմբերի 20-ին, երեկոյեան ժամի 8-ին, Դաւրեղովկի փողոցի վրա գտնվել է սպանված Թիֆլիսցի գնդի օֆիցէր Իշխանէն, 26 տարեկան հասակում։ Դիակի մօտ կանգնած է եղել մի ինչ որ վարժուհի, Շմիդինա ազգանունով։ Վերջինս պատմելով Իշխանէն սիրում էր իրան։ Նրանք միասին կառք նստած գալիս են այդտեղ, և ապա իջնելով կառքից սկսում են միասին վերև բարձրանալ. այդ ժամանակ Իշխանէն առաջարկութիւն է արել, և մերժումն ստանալով, սարքանակի երկու գնդակի հարուածով վերջ է տալիս իր կեանքին։ Իբրև թէ Իշխանէն մի քիչ էլ խըմած է եղել։ Սակայն դէպքի հանգամանքներից երևում է, որ այդ պատմածը մտացածին է. օֆիցէրի մօտ տարձանակ չէ գտնվել և հնարաւոր էլ չէ եղել գտնէ որոշել թէ ինչ. պիսի գնդակներով է սպանված, մանաւանդ որ երկու վէրքն էլ եղել է մահացու, որոնցից մէկը կպել է կրծքին, իսկ միւսը՝ փորին։ Շմիդինան կալանաւորվում է իսկոյն, իսկ դիակը տանում են Միքայէլեան հիւանդանոց։ Երէկ, սեպտեմբերի 21-ին, սպանված Իշխանէի եղբայրը, Լէոնիդ Իշխանէն, որ նոր է եղել վերադարձած Հեռաւոր Արևելքից, կօմենդանտի վարչութեան մէջ ծառայող օֆիցէր Տեմեիկովի հետ մ

Դուրսօվն և զրուցել նրա հետ ամբողջ երկու ժամ Ռուսաստանի ժամանակակից գրութեան մասին։ Ինչպէս հաղորդում են, Պօբեդոնոսցեվը ասել է հետեւեալ նշանակալից դարձուածքը «Մեզ ոչ ոք չէ կարող մեղադրել քաղաքական անհասատակամութեան մէջ։ Ինչ վերաբերում է անհատապէս ինձ, ես այժմ չափազանց յոգնած եմ զբում ինձ և հաղիւ թէ շուտով կարող լինեմ կրկին զբաղվել գործերով։ Երեւի ժամանակն է հանգստանալու։ իմ կեանքը արդէն վերջացել է, սկսվում է ապրելը»։

—

Մայրաքաղաքի լրագիրները նորից են ընդսում հաղորդել, որ զինուորական մինիստր Բէզոբրազովը հրաժարական է տալիս։

—

Գլխաւոր զինուորական դատախազ Պաւլովը բացատրել է զինուորական-դաշտային դատարանների նախագահներին, որ գլխաւոր զինուորական դատարանը զինուորական գրութեան մէջ յայտարարված տեղերում դատարանի վճռի դէմ բողոք ներկայացնելու համար ժամանակամիջոց է նշանակել 48 ժամ։

—

Ներկայ ուսումնական կիսամեակում, Нов. Вр.»-ի ասելով, բոլոր արական գիմնազիաներում սովորական ակտերը չեն լինելու։ Պարզատարութեան արժանացած աշակերտներին պարգևները տրվելու են գիմնազիայի դիւանատնից։

—

ԽԱՐԿ գիւղից (Դարալագեազ) մեզ գրում են. «Աւորեայ հոգսերից մէկն էլ ջրաղացներից ազատ օգտվելու հարցն է։ Պաչիկ գիւղը բաղկացած է հարիւրերեսուներկու ծուխ մնից։ Նա ունի չորս ջրաղաց գիւղից 5—6 վերստ հեռաւորութեան վրա, Ավուշ-Ախօրա և Բելաւ-Թանամա Թուրքական գիւղերի սահմանին կից։ Այդ ջրաղացներից է օգտվում ընդհանուր 1262 շունչ ժողովուրդը։ Դիմելով նորեկ գաւառապետին՝ խնդրամատոյց ենք եղել զէնք տալ՝ պահապաններ քանենք, որպէս զի ժողովուրդը չը զբկվի այդ չորս ջրաղացներից։ Ունենք մի ճանապարհ գիւղի մօտին. ջրաղացների և հանդի ճանապարհը։ Իսկ այդ ճանապարհը ընկած է Խաչատուր Յակոբեանի հողի զրաղով. երեսուն տարուց առել է որ ժողովուրդը այդ ճանապարհով գնում է ջրաղաց և հանդը։ Խաչատուր Յակոբեանը լաւ տիրացու է, լաւ կարդալ գիտէ եկեղեցում, լաւ ձայնով, բայց չը գիտենք ինչու կարել է այդ ընդհանուր 1262 շնչի ճանապարհը իր համար կալ շինել, ցորեն թակել և ճանապարհը խանգարել։

—

ՍՏԱԻՐՈՊՕԼԻՑ մեզ գրում են. «Այստեղ գտնվող մի ուսանող մի կուլտուրական կարևոր գործով զբաղված է։ Նա տեղական քահանաներից մէկի համար խաչի ստորագրութիւններ հաւաքելու գործին է նուիրել իրան. մեզ զարմացնում է, որ ուսանողը ներկայ յուզալից ժամանակում բան ու գործ է շինել այդ ստորագրութիւնը»։

—

ՍՏԱԻՐՈՊՕԼԻՑ մեզ գրում են. «Նահանգապետի կարգադրութեամբ փակված են տեղիս տպարանները և այնտեղ տպվող թ ղթերը դադարեցրած։ Թէ խմբագիրները և թէ տպարանատէրերը դատի են ենթարկած։ Վերջինները խնդրամատոյց են եղել տպարանները բաց անելու, հրաժարվելով մինչև ուժեղացրած գրութեան վերացումը լրագիրներ տպագրելուց։ Դեներալ Լիովինօվի նահանգապետ նշանակվելով խստութիւնները սաստկացան։ Նրա հնարած տուգանքներից ու բանտարկութիւններից սաստիկ հիւծում է ժողովուրդը»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

20 սեպտեմբերի

ԱՍԿԱԲԱԴ, 19 սեպտեմբերի։ Զինուորական-նահանգական դատարանի նիստի ժամանակ ատրճանակով սպանվեց պրոկուրոր գեներալ Բէկնէզովը, սպանողը, տեխնիկ Մօրօզովը, կալանաւորելու ժամանակ ցոյց տուած ընդդիմադրութեան ժամանակ ծանր կերպով վիրաւորվեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 սեպտեմբերի։ «Բերլին Տագեբլատ» լրագրում տպված է մի յօդուած, որի մէջ հաղորդվում է, որ իբր թէ հրէական հարցի առիթով պատրաստված է մի օրինագիծ, որի իմաստը կայանում է նրանում, որ հրէաների վրա նայում են՝ ինչպէս յեղափոխութեան գլխաւոր մասնակիցների վրա։ Յօդուածը, որը արտատպված է «Товарищъ» լրագրից, ներկայացնում է կատարեալ ֆանտազիա։

ԿՐՕՆՇՏԱԴ, 19 սեպտեմբերի։ Բերդի կոմենդանը «Կայսր Ալէքսանդր» զրահակիր նաւի 295 նաւասաստիներին յանձնել է դատարանին, որոնք մեղադրվում են կապիտանի հրամանը չը կատարելու մէջ, որը նաւաստիների ապստամբութեան ժամանակ պահանջեց իջեցնել նաւակները ափ հանելու համար զօրք։ Գործի քննութիւնը կը սկսվի առաջիկայ շաբաթից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 սեպտեմբերի։ Շլիսսելբուրգի բերդում ի կատար ածվեց գեներալ Կօզլօվին սպանողի մահվան դատավճիռը, որը իրան մնուանեց գիւղացի Վիկտոր Վասիլիև։

ՄՕՍԿՎԱ, 19 սեպտեմբերի։ Քաղաքապետը մի նամակով դիմեց համալսարանի ըկիսօրին, որի մէջ մատնացոյց է անում, որ համալսարանում ժողովներ են տեղի ունենում կողմնակի անձանց մասնակցութեամբ, որոնք պատկանում են յեղափոխական կուսակցութիւններին։ Պահպանելով կարգը մայրաքաղաքում՝ նա չէ կարող թոյլ տալ, որպէս զի համալսարանում կազմակերպվեն յեղափոխական խմբեր, և նա կանգ չի առնի ձեռք առնելու ամենախիստ միջոցներ. միևնոյն ժամանակ անհրաժեշտ է գտնում դիմելու ուսանողութեան մի յայտարարութիւնով, որի մէջ ասվում է, որովհետև սեպտեմբերի 18-ին և 19-ին տեղի ունեցան ժողովներ սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութեան ընդդիմադիր ֆրակցիայի մասնակցութեամբ, որի ժամանակ ժողովներում ներկայ էին բանւորներ և ուրիշ կրթական ուսումնարանի աշակերտներ, այդ պատճառով քաղաքապետը յայտարարում է, որ այդ ժողովները, որոնք օրէնքով արգելված են, իսկոյն կեթ կը ցրվի։ Վերջին ժողովը շատ խաղաղ բնաւորութիւն էր կրում.ուսանող ճառախօսները մեծամասնութիւնը յայտնեց այն միտքը, որ անհրաժեշտ է խուսափել միջնադէպքից և ընդունել բոլոր պայ- մանները, որպէս զի համալսարանը պահպանվի։

ՕԴԷՍՍԱ, 19 սեպտեմբերի։ Այրվեց ռուսական ամենամեծ թատրոնը։ Վնասը 100 հազարից աւելի է։ Հրդեհի ժամանակ քանդվեց պատը, որից սպանվեցին կամաւոր հրդեհաշէջ խմբի 4 անդամները, որոնց թուումն են համալսարանի ուսանողներից երկուսը։

ՊՕԶՆԱՆ, 19 սեպտեմբերի։ Ոստիկանութիւնը գրաւեց լեհացի գործարանատէր Բէզիսիպկի բնակարանից 10,000 օրինակ լեհական կոչեր, որոնցով հրաւիրվում է ընդհանուր ուսումնարանային գործադուլ անել Պոզնանսկի նահանգում։

21 սեպտեմբերի

ՀԷԼՍԻՆԳՓՕՐՍ, 19 սեպտեմբերի։ Սկսվեց Սվէաբօրգի ապստամբութեան մասնակցած ֆինների դատաստանական գործի քննութիւնը։ Մեղադրեալները յայտնեցին, որ կարմիր գվարդիայի հրամանատարի հրամանով նստելով «Բօտա» նաւը՝ չը գիտէին որ իրանց տանում էին Սվէաբօրգ. բերդում նրանք ապստամբութեան ակտիվ մասնակցութիւն չունեցան. շատերը իրանց բաժանած զէնքերը չէին կարողանում գործադրել և գնդակներից թաքնվում էին նկուղներում։ Դատարանը հետեւեալ նիստը նշանակեց սեպտեմբերի 20-ին։

ՎԱՐՇԱՎԱ, 20 սեպտեմբերի։ Համալսարանի խորհուրդը, քննելով իրերի դրութիւնը, եկաւ այն եզրակացութեան, որ մօտիկ ապագայում զբաղմունքները վերսկսելու անկարելի է. դրա համար ակադեմիական կազմակերպութիւնները և Վարշավայի համալսարանի միջոցները պէտք է գործադրվեն ստեղծելու համար Ռուսաստանում նոր բարձր կրթութեան հիմնարկութիւն։

ԽԱՐԲԻՆ, 20 սեպտեմբերի։ Հեռաւոր Արեւելքի զօրքերի հրամանատարի հրամանի համաձայն, սեպտեմբերի 15-ից ազատ է մուտքը եպոլետաչիների համար. զէպի հիւսիսային Մանջուրիա ժամանեցին առաջին եպոլետական վաճառականները։

ԿԵԼՅԻ, 20 սեպտեմբերի։ Զինուորական-դաշտային դատարանի վճռով 3 կողոպտիչներ գնդակահարվեցին։

ԲԵՐԼԻՆ, 20 սեպտեմբերի։ Պաշտօնական շրջանակներում և մասնաւոր հիմնարկութիւններում բոլորը առանձին ուշադրութեամբ են հետեւում անգլիական իրաւաբաններին, որոնք մասնակցում են միջազգային իրաւունքի ընկերակցութիւնների համագումարին։ «Ֆոսսիշէ Ցեյտունգ»-ի ասելով, համագումարը կը ծառայի ժողովուրդների ազգակցութիւնների միաւորելու գործին։ Այն քաղաքականութիւնը, որով ընթանում է Մեծ-Բրիտանիան, հիմնված է միութեան վրա։ Որպէս զի Գերմանիան ուժեղացնի իր դիրք ծովի վրա, նա իրաւունք ունի իր վերջին միջոցները գործ դնել ինքնապաշտպանութեան համար, բայց երբէք նա իրան չի թոյլ տայ ընդհարում առաջացնել Անգլիայի հետ։ Գերմանական ժողովրդի աչքում՝ Մեծ-Բրիտանական ափերի վրա յարձակման միտքը թուում է ուղղակի անիրելութիւն։

ՍՏՕԿՀՕԼՄ, 20 սեպտեմբերի։ Կառավարութիւնը կարգադրեց արտաքսել Շվեդիայից ֆինլանդացիներ Նիմանին Լուստոին, և ուրիշ 4 հոգու, որպէս հասարակութեան համար վնասակար անձնաւորութիւններ։

ՅԷՏԻՆԷ, 20 սեպտեմբերի։ Ժողովրդական ներկայացուցիչների առաջին ընտրութիւնները անցան խաղաղ կերպով։ Պատգամաւորները որոշ կուսակցութիւնների դրօշակի տակ չը մնան, բայց և այնպէս լուրջ ընդդիմադրութիւն կառավարութեան հետ նախատեսվում է։ Սկուպշտինայում պարապմունքները սկսվեցին սեպտեմբերի 18-ին։

ՍՈՖՈՒՄ, 20 սեպտեմբերի։ Ռուսաց ընկերութեան «Դէօրգի» շրջենաւը, որ գիշերը դուրս գալով ուղևորվեց Բաթում, 25 չարագործներ մահվան սպառնալիքների տակ նաւապետին ստիպեցին կանգնեցնել շրջենաւը Կօդօրի մօտ, և խլեցին պօստը 16,000 ռուբլիով։ Չարագործները կրակելով, 3-րդ կարգի ճանապարհորդներին և նաւի ծառայողներին քշեցին տարան 3-րդ կարգի ընակարանը և բռնեցին բոլոր անցքերը։ Առաջին կարգում եղած ճանապարհորդները փորձեցին ընդդիմադրութիւն ցոյց տալ, և մի քանի անգամ կրակեցին, բայց կողոպտիչները սպառնում էին իրանց ձեռքում իբրև պատանդներ գտնվող նաւապետի երկու օգնականներին և չորս նաւաստիներին սպանել։ Պահանջելով մակոյկ՝ կողոպտիչները պատանդների հետ միասին մակոյկ նստելով ափ դուրս եկան։

ԿԷԼՆ, 20 սեպտեմբերի։ «Կէլնիշէ-Ցէյտունգ»-ը բողոքում է «Страна»-ում տպված Մաքսիմ Կովալէվսկու յօդուածի դէմ, որի մէջ ասում է, անհրաժեշտ է դաշնակցութիւն կազմել Ռուսաստանին Անգլիայի հետ ընդհանուր թշնամու՝ Գերմանիայի դէմ։

Կովալէվսկին մատնացոյց է անում, որ գերմանական քաղաքականութիւնը Ասիայում ստիպեց այդպիսի մի դաշնակցութիւն։ «Կէլնիշէ Ցէյտունգ»-ը ասում է, որ եթէ գերմանական առևտուրը Պարսկաստանի վերաբերմամբ մի որոշ ազդեցութիւն է գործում, դա նրա լիակատար իրաւունքն է. բայց Գերմանիան չի ձգտի ճնշելու և հեռացնելու Պարսկաստանից Ռուսաստանի և Անգլիայի ազդեցութիւնը։

ՄԻՏԱՎԱ, 20 սեպտեմբերի։ Զինուորական-դաշտային դատարանի վճռով մօր և 20-ամեայ որդու ներկայութեամբ գնդակահարվեցին լատիշ Բրախմանը և Ցբէյմանը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 սեպտեմբերի։ Հոկտեմբերի 12-ին Պետերբուրգում կայանալու է առևտրի և արդիւնաբերութիւնների առաջին համագումարը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 սեպտեմբերի։ Սեպտեմբերի 20-ին կայացաւ հոկտեմբերի 17-ի դաշնակցութեան Պետերբուրգի և Մօսկվայի կենտրոնական կոմիտէների նիստը։ Ժողովը բացեց Դուբչիվը, որը հրաժարվեց կենտրոնական կոմիտէի նախագահի կոչումից, և հեռացաւ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 սեպտեմբերի։ Երրորդ Իզմայլովսկի գնդի № 3 տան մէջ բացվեց պայթուցիկ նիւթերի լաբորատորիա։ Ռուզարկութեան ժամանակ գտնված են 13 պատրաստի ռումբեր, դրանց պատրաստելու համար նիւթեր. կալանաւորված են 5 հոգի։

Ճանապարհների հաղորդակցութեան ինստիտուտում երրորդ անգամ խուզարկութեան ժամանակ գտնվեց 18 ռումբի կաղապարներ, մի մնդուկ երկու և կէս պուդ կաղապարներով, մի մնդուկ պայթուցիկ նիւթերով, եւ էքսպրեսական պայթիչներ և ռումբերի մասեր։ Կալանաւորված է ուսանող Ֆինկը և ինստիտուտի պահապանի որդին՝ Բօգդանօվ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.։
Կ. Մ. ԶԻՒՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱԽԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորքու, վեներական և վերաբուժու. իւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Օ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—2½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՂԵՐԲԻՆԱ—1—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Գ. Յ. Գուրջինով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահան.։
Ե. Գ. ԱԲԵԱՆՑ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.։
Վճարը 50 կ.։ չքաւորները ձրի։ Համախորհրդի (գօն սուլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

մշտական ժամհականիրով։

Եկիզավէտինսկայա փողոց, 101, տէլէֆոն 1026

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։

Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշու և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—Շղային, ներքին և նեարդային։
Գ. Ն. ԴԵՄԻՏՈՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱԽԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՔԻՆԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի։
Գ. Ա. ԲԷՅԵՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում մեկրօսկոպական, բակտերիօլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և նանատուներ (кормилица) ընտրողութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.։ Օպերացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմէրներից։

(չ. ու. կ.) 93—100

Մի հայ ընտանիքում ընդունում են

Գիշերօթիկ աշակերտներ

Ցանկացողները կարող են դիմել տիկին Ղազարեանին հետեւեալ հասցէով՝ Казначейская № 7. д. кн. Тумановой, противъ Александровского сада։ Կարող են դիմել նաև Ներսիսեան դպրոցի ուսուցիչ Դր. Միրզոյեանին, կամ նոյն դպրոցի VII-րդ դասատան աշակերտ Տիգրան Բաղալեանցին։ Բնակարանը շատ մօտ է Ներսիսեան դպրոցին։

4—4

ՅԱՅՏՆՈՒՄ ԵՆՔ

ի գիտութիւն ՄԱՆՐԱՎԱՃԱՌՆԵՐԻ, որ

„Բօզարջեւանց եւ Որդիք“

Առևտրական Տան ծխախոտի գործարանի թուղթուն պապիրոսները նրանք կարող են ձեռք բերել մեր

«Թուղթիկ-սայլակից»

(развозка) Բօզարջեանցի յայտարարված գներով, այն է՝ պապիրոսը 10-ը 5 կոպ. «Միմպատա» և № 8—1000 հատը 4 ր. 30 կոպ. և 10-ը 3 կոպ., № 7 ու № 16—1000 հատը 2 ռուբ. 60 կոպ.։

Պատուէրները,—ապրանքը իրանց հասցնելու համար, ընդունվում են Ղէոնդ Այդինեանի խանութում, въ желѣзный рядъ.

հ. շ. կ. 2—3

Կենտրոնական գրավաճառանոցում

Թիֆլիսում, վաճառվում են Նիկողայոս Տէր-Ղևոնդեանի հետեւեալ աշխատութիւնները

Մայրենի լեզու ա. տարի 32-րդ պատկերազարդ տպ. գինն է 25 կ.։
» » բ. տ. 21-րդ, պատկերազարդ տպ. գ. 40 կ.։
» » գ. տ. 15-րդ տպ. գ. 50 կ.։
» » գ. տ. 12-րդ տպ. գ. 55 կ.։
Մայրենի լեզուի քերականութիւն 6-րդ տպ. գ. 50 կ.։
Հայրդի Սրբոց. Պատմ. հին կտակ. գ. 35 կ.։
» » Նոր կտակարան գ. 35 կ.։
Հէնչելի բանաւոր և գրաւոր հաշուելի թուաբանական խնդիրներ և օրինակներ ա. և երկ. տ. դասընթացք 6-րդ տ. գ. 35 կ.։
Նոյնը երրորդ տպագ. դասընթացք գ. 50 կ.։
Մանդինեան. Ս. Ազգային Ընտանեկան աշխարհ գ. 25 կ.։

Գումարով գնողներին սովորական զեղչումն է լինում. Օտար տեղերից դիմել Въ Тифлисъ Центральной книжной торговля, արտասահմանից Librairie centrale à Titlis։

Ե. 3—10

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
և ծախվում է
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆԻ

„ՀԱՅ ԿՏՐԻՃՆԵՐԸ“

Պատկեր հայ-թուրքական կռիւներից
(24 երես)
ԳԻՆԸ 7 ԿՕՊ.

Հեղինակի մեկնելու պատճառով դիմել բացառապէս «Գուտտենբերգ» գրախանութը։
ԳՈՒՄԱՐՈՎ ԶԵՂՉ.
ու. կ. ե. 1—5

ԵՐԵՎՈՅԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Մայրերի և դաստիարակչուհիների համար։
Միքայէլեան փող., № 138.
Ունկնդիրների ընդունելութիւնը շարունակվում է։
1—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Ներսիսեան դպրոցի VII դասարանից՝ կամենում է

ԴԱՍԵՐ ՏԱԼ

մի հայ ընտանիքում—ընակարանի և կերակրվելու փոխարէն։
Հասցէն՝ Большая Ванкская, д. Саифова, № 29, квартира № 5.
1—5

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Զախարքէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԶՂԱՑԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ. երեկոյեան 6—7 ժ.
ՏԷԼԷՖՕՆ № 1087
Սօլօլակ, Լերմոնտովսկայա փող., 16.
(ա. օ.) 5—150

ԲԺՇԿԱՊԵՏ
ՄԻՆԱՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախ. օրդինատոր Մօսկվայի համալսարանի կլինիկայի
Մասնագէտ միզանցքասեռական, վեներական (սիֆիլիսի) և կաշուի հիւանդութիւնների ընդունում է առաւօտեան ժամի 11-ից—12-ը, երեկոյեան 5-ից մինչև 7-ը. Սօլօլակ, Բոիշերսկի փողոց տուն № 1, «պօժարնի կօմանդոյ» դիմաց, տէլէֆօն № 711։ 4—10

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի
բացվում են
ԿԱՆԱՆՑ
ԳԼԽԱՐԿՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
միակը Թիֆլիսում։
Լիակատար դասընթացը տեւելու է երեք ամիս և արժէ 35 ռուբլի։
Վաղօրօք դիմել՝ ցերեկվայ ժամը 12—2-ը։
Андреевская ул., д. 29 кв. 5.
Հիմնադիր՝ Վառվառէ Տէր-Օհանեանց
(չ. ու. կ. ե. հ.) 3—5

Ա. ՄԵԼԻՔ-ԱՂԱՀՎԵՐԴԵԱՆ
ԲՆԱԳԻՏԱԿԱՆ և ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ
առարկաների դասեր։
Межевая, 2. 4—20

ՀԱՐԿԱՒՈՐ Է
մի տնային ուսուցչուհի, որը պէտք է գիտենայ հայերէն, ռուսերէն և կար ու ձև։
Պայմանների մասին դիմել՝ Въ ст. Абинская (Куб. обл.) Кеворку Кайфеджяну.
հ. ու. 2—2

Լոյս տեսաւ
ԶԵՌՆԱՐԿ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Առաջին տարի
ՀԻՆ-ԱՇԽԱՐՀ
ՎԻՆԳԻՐԱԴՕՎԻ
(Պրոֆէսօր Մօսկվայի համալսարանի)
Թարգմ. Գ. Խաժակ
ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ
Դիմել՝ Тифлисъ Книжный магазинъ «Гутенбергъ». 2—5

Լոյս տեսաւ և վաճառվում է
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԶԻԹՈՂՑԵԱՆԻ
(Ֆենիկս Ռենեսսանս)
„ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՄԵՂԵԴԻՆԵՐ“
(Թարգմանական և ինքնուրոյն բանաստեղծութիւնների ժողովածուն)
Գինը 30 կոպ. ճանապարհածախսով 40 կ., 100-ից աւելի գնողներին 20% զեղչ. պակաս գնողին 10%։
Դիմել թարգմանչին՝ Александрополь Никогайосу Цитохцяну. 2—15

Ա. ՓՈՐՍՈՒՂԵԱՆ
ԺՈՂՈՎԱԾՈՒ
Թուաբանական խնդիրների
II և III տարի
ԳԻՆԸ 20-ական ԿՕՊ.
Ծախվում է Կարսում և գաւառների բոլոր յայտնի գրախանութներում։
Դպրոցներին մեծ զիջումն։
(ու. կ. ե.) 5—5

ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Ամառային գնացքների երթեւեկութիւնը)
(Ժամերը հաշուած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի մէջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Գօտային	Մարդատար.	Արագ.	Ապրան.
Բաքուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 08 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գ
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. գ
Թիֆլիսից դուրս գալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	8 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր.
Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր.
Բաքու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. գ
Երևանից դուրս գալը	12 » 03 » »	—	—	11 ժ. 26 ր. գ
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 15 ր. գ
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	7 » 38 ռ. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. գ
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր. գ
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. գ
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գ
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր. գ
Կարս հասնելը)	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
ԱԶԻՍԱՐՀԱՒՈՐԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
դասագիրք ստորին դասարանների համար
յօրինեց Մ. ԱԲԵՂԵԱՆ, ուսուցիչ ս. Էջմիածնի Գ. ճեմարանի
Գինն է 75 կօպէկ։
Դպրոցների համար, եթէ անմիջապէս հեղինակից առնուվն 25 օրինակ գնելու դեպքում 75 կօպէկի տեղ 50 կօպէկ։ Ճանապարհածախսը (25 օրինակի համար պօստի փաթեթի համար 75 ռուբլի) գնողների վրա է։ Պէտք է վճարել կանխիկ, կամ պատուէր տալ վերադրի վրա։ Պատուէրներն անյապաղ և ճշտութեամբ կը կատարվեն։ Դիմել՝ Эчміадзинъ, Академикъ Абегянъ, կամ Թիֆլիսի գրավաճառներին։
(Ե. հ. ու. կ.) 19—30

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Լերմօնտովսկայա փողոց, № 15)
Ցանկացողները, ունենալ իրանց առևտրական գործերի համար ուսման ընթացքը ստացած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնադիր Պ. Գ. Նուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատած ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր աստեղաստաններ։
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի
Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս կուրսերն հիմնողի քարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են ТИФЛИСЪ учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу. 2. 1 անդ. (ու.) 11—12

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36
(կ.չ.ու.) 54—100

ԵԴԵՍԻԱՑԻ
հայոց եկեղեցական-ծխական միդասեան արական դպրոցի համար
ՀԱՐԿԱՒՈՐ Է
ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ. իւրաքանչիւր, շաբաթական պէտք է ունենայ 27 դաս. ուսուցիչներից մէկը պարապելու է ռուսաց լեզուից և միւսը երկրորդական առարկաներից։ Տարեկան ռոճիկ ճանապարհածախսով իւրաքանչիւրին 360 ռուբլի, ընակարան, վառելիք և ծառայ։
Դիմել այս հասցէով՝ Черезъ гор. Моздокъ въ мѣс. Эдиссію, попечительству армянскаго училища. 3—3

РАДИКАЛЬНОЕ СРЕДСТВО,
дѣлающее лицо свѣжимъ и чистымъ
Источникъ красоты.
Patent. въ Австріи.
CONDRES MESCHI
METAMORPHOSA
Кремъ КАЗИМИ
МЕТАМОРФОЗА
противъ ВЕСНУШЕКЪ
Доказательствомъ подлинности и дѣйствительности средства противъ веснушекъ служитъ подпись Cakimi и приложенный при каждой банкѣ рисунокъ „ИСТОЧНИКЪ КРАСОТЫ“.
Безъ подписи Cakimi и рисунка, утвержденнаго Департаментомъ Торговъ. и Мануфактур. за № 4683—
ПОДДѢЛКА.
Продается во всѣхъ аптекарс. парфюм. магаз. и аптекахъ.
„ԻՍՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲԻՒՐ“.
(ամ. 2 ան. 11 և 22) 6—6

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
„Գուտտենբերգի“
գրախանութում
Յ. ՍՕԼՕՎԵԱՆԻ
աշխատութիւնները
1) Մեռած ծովում, վէպ 390 երես 1 ր.
2) Կոտրված սիրտ, վէպ 170 երես — 40 կ.
3) Հարազատ գծեր, պատկ. . — 15 կ.
4) Ղղնաղլուղս Մաց, վօդեվիլ 1 գործ., ր. տպագր. . . . — 20 կ.
Դիմել՝ Тифлисъ Книжный магазинъ «Гутенбергъ». 2—3

Լոյս տեսաւ
ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ
Հայոց դպրոցների համար
Գ. ԼԵՒՈՆԵԱՆԻ
Գինը 20 կոպ.
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гутенбергъ». 2—5

ԲԺԻՇԿ
Գ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, մասնաւորապէս կրծքի։
Ընդունելութիւն և բուժումն X ճառագայթներով առաւօտեան ժամը 10—11 և երեկոյեան 5—7։
Քէնէդիական փող. տ. № 7 (Վէտցելի հիւրանոցի մօտ)։ 24—30

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւններ։ Ընդունում առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյե